



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ  
ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ  
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ԲԱՅՈՒՄ 1874 ԱՄԻՆ

ՆԻՍՏ Ը.

8 ՆՈՅԵՄԲԵՐ 1874



ԿՈՍՏԱՆԻՆՍՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ե. ԳԱՎԱՅԵԱՆ

1874

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ

1. Թագէտ	Եպիսկոպոս	Բ. 2
2. Գրիգոր	«	Բ. 9
3. Խորէն	«	Բ. 9
4. Գարեգին	Վարդապետ	Բ. 9
5. Մատթէոս	«	Բ. 9
6. Խորէն	«	Բ. 9
7. Կարապետ	«	Բ. 9
8. Ներսէս	«	Բ. 9
9. Ամբրոսիոս	«	Բ. 9
10. Հմայեակ	«	Բ. 9
11. Յովհաննէս	«	Բ. 9
12. Յովհաննէս	Քահանայ	Բ. 2
13. Գեորգ	«	Բ. 2
14. Գրիգոր	«	Բ. 2
15. Խորէն	«	Բ. 2
16. Յարութիւն	«	Բ. 2
17. Սիւրբաս	«	Բ. 2
18. Արիստակէս	«	Բ. 2
19.		
20.		

ԱՇԽԱՐՀԱԿԱՆՔ

(Ա. Վիճակ)

Գրականութիւն, կենսիկ փառս և Գրականութեան զորք

21. Սենեքերիմ	Մ. Մանուկեան	Բ.
22. Պոզոս	Վասիլեան	Բ. 2
23. Յակոբ	Յակոբեան	Բ. 2
24. Բարսեղ	Քիւրճեան	Բ. 2
25. Թագէտ	Պէկեան	Բ. 2
26. Գեորգ	Սարգսեան	Բ. 2
27. Ն.	Սարգսեան	Բ. 2
28. Պոզոս	Պոզոսեան	Բ. 2
29. Եսայի	Սարգսեան	Բ. 2
30. Մանուկ	Սարգսեան	Բ. 2
31. Պոզոս	Յակոբեան	Բ. 2
32. Բարսեղ	Յակոբեան	Բ. 2
33. Գրիգոր	Պէկեան	Բ. 2
34. Պէկեան	Պէկեան	Բ. 2
35.		
36.		
37.		

(Բ. Վիճակ)

Պիտոյի մասին

38. Կարապետ	Ս. Խորէնեան	Բ. 2
39. Յարութիւն	Մարգարեան	Բ. 2
40.		

Եկեղեցական

41. Համբարձում	Խորէնեան	Բ. 2
42. Խաչատուր	Ղազարեան	Բ. 2
43. Կարապետ	Գ. Փարսեան	Բ. 2
44.		

Իրականութիւն Մ. Խորէն

45. Յովհաննէս	Ս. Մարգարեան	Բ. 2
46. Սեբեոս	Պոզոսեան	Բ. 2
47.		
48.		

Բ.	Քաղաքացիական իրավունք	Բ. 2
Բ. 2	Քաղաքացիական իրավունք	Բ. 2
Բ. 9	Քաղաքացիական իրավունք	Բ. 9
Հ. 9	Քաղաքացիական իրավունք	Հ. 9

Իրականութիւն Մ. Կարապետ

49. Ալեքսան	Սարգսեան	Բ. 9
50. Միհրան	Պահլավեան	Բ. 9
51. Յովհաննէս	Յակոբեան	Բ. 9
52.		

(Գ. Վիճակ)

Քաղաք

53. Գրիգոր	Սեփիւրեան	Բ. 9
54. Տեղեկ	Մ. Երսէրեան	Բ. 9
55. Միհրան	Մարտիրոսեան	Բ. 9
56. Արիւ	Սեփիւրեան	Բ. 9
57. Ստեփան	Խորէնեան	Բ. 9
58. Նշան	Քաղաքեան	Բ. 9
59. Մարտիրոս	Յ. Տեղեկեան	Բ. 9
60.		
61.		
62.		

Գրականութիւն

Միջոցառում

63. Յակոբ	Պ. Նորատուհնեան	Բ. 2
64. Յակոբ	Կոստանդեան	Բ. 2
65. Տեղեկ	Կոստանդեան	Բ. 2
66. Կարապետ	Պ. Պէկեան	Բ. 2
67.		

Պիտոյի մասին և Ղազարի մասին

68. Յարութիւն	Մեղեմի-Գուր	Բ. 2
---------------	-------------	------

(Գ. Վիճակ)

Ղազարեանի և ինքնի

69.		
70.		

Գրականութիւն

71. Միհրան	Մարտիրոսեան	Բ. 2
72. Կարապետ	Մարտիրոսեան	Բ. 2

Նորագոյն

73. Յակոբ	Եկեղեցիական	Բ. 2
-----------	-------------	------

Եկեղեցական Մատթէոսի

74.		
-----	--	--

Եկեղեցական

75.		
-----	--	--

Եկեղեցական Մ. Կարապետ և Մ. Սարգսեանի

76.		
-----	--	--

Գրականութիւն

77.		
-----	--	--

Ղազար և Պոզոսի մասին

78.		
-----	--	--

Նոր գրքի և Միհրանի

79. Ղազար	Ղազարեան	Բ. 2
-----------	----------	------

Պոզոս

80. Միհրան	Գ. Խորէնեան	Բ. 2
81. Յովհաննէս	Կորնիլեան	Բ. 2
82. Յակոբ	Սարգսեան	Բ. 2

Քաղաքացիական

83. Յարութիւն	Գ. Տեղեկեան	Բ. 2
84. Յարութիւն	Յեղեղեան	Բ. 2

ՆԻՍՏ Ը.

8 ՆՈՅՄԲԵՐ 1874

ՆԱԽԱԳԱՀ. — ՏԵՐ ՆԵՐՍԷՍ ՍՐԲԱՋԱՆ ՊԱՏՐԻԱՐԿ  
ԱՏԵՆԱՊԵՏ. — ՌՈՒՍԻՆԵԱՆ ԷՖԷՆՏԻ

(Բ. Ատենապետ)

ՕՐԱԿԱՐԳ

1. Ընդունելութիւն անդամաց անտի ատենագրութեան.
2. Ընտրութիւն Գ. Ատենապետի.
3. Ամբողջացում Բարաքանի ժողովոյ.
4. Ընդունելութիւն նիւ ատենագրութեանց.

Ատենադ ընտրուեցաւ ժամը 7 ին 'ի ներկայութեան 45 երեսփոխանաց, որոց վերջին թիւն 56 ի հասաւ:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ ՆԱԽԱԳԱՀ ՆԻՍՏԻ  
ԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ

Նախընթաց նիստի ատենագրութիւնն ըստ որում տպագրութեամբ արդէն հաղորդուած էր երեսփոխանաց, Ատենապետ էֆէնտի հրաւիրեց զերեսփոխանս որ դիտողութիւն եթէ ունին՝ ընեն:

Իֆէկեան շ. էֆ. — 61 էջին Ա. սրահակին մէջ իմ խօսքիս վերջաբանն՝ էլի «յոյ» շ. էֆ. +, եւ այլն թերի է, որ պիտի ըլլայ. «Եթէ առաջարկեալ կանոնագրութիւնն իրօք չը դործադրենք, մի միայն քաղաքավարական ցոյց մ'ըրած պիտի ըլլանք նախագահ Սրբազանին եւ ոչ թէ կանոնագրութեան ստիպողութիւնը ճանչցած, եւ անկէ օգուտ քաղելու մտադրութիւն ունեցած»:

Պէկեան թ. էֆ. — Նախաքննիչ դիւ-

նաց ընտրութեան արդիւնքը ներկայացաւ, արդեօք վաւերացաւ: Դիտողութիւնս այն է որ 12, 13 քուէներով քանի մը անձինք ընտրուած են, ատենք ըստ կանոնագրութեան ընտրեալ են. քուէարկութեան ժամանակ իսկական մեծամասնութիւնը ներկայ չէր, ընտրելոց ոմանք որոշող ձայնից միաբանութիւն չեն շահած. հետեւապէս ընտրեալ չեն կրնար ըլլալ:

ԱՏԵՆԱՊԵՏ էֆ. — Այդ դիտողութիւնդ նկատողութեան կ'առնու Գիւանը:

Պէկեան թ. էֆ. — Քուէի շմանակցոց մէջ իմ անունս ալ յիշուած է, բայց մէջ բերած պատճառս չէ արձանագրուած. այն էր թէ ժողովը սանձանագրապէս մեծամասնութիւն չունէր. ես պատրաստ էի քուէ տալ եթէ ունենար. ատենադպիր էֆէնտիին հարցուցի, եւ նա զլացաւ իմ հարցմանս պատասխան տալ, այդ պատճառաւ քուէ չտուի:

Ուրիշ դիտողութիւն չըլլալով, ատենա-

զրուեթիւնն ընդունելու թեան զրուեցաւ եւ ընդունուեցաւ :

Յետոյ Ատենադպիր էֆէնտի ժողովին ներկայեց Սարգիսեան Յակոբ էֆ. ի հրաժարագիրը եւ կը կարդայուի , որ ահաւասիկ .

Ամենապատիւ Բարձր Ս. Պատրիարք Հայր Նախագահ Ազգ. Ընդհ. ժողովոյ .

Ազգային Ընդհ. ժողովոյ անդամակցութեանըս շարունակութիւնը այսուհետեւ չեմ կարող շարունակել անձնական զբաղմանցս պատճառաւ : Ուստի խնդրեմ պատկառելի ժողովէդ որ ընդունի սոյն երկտող զրուեթիւնս իբրեւ պարզ հրաժարագիր :

8 Նոյ. 1874 Ե. Սարգիսեան  
Կ. Պոլիս

Եւ ժողովը ընդունեց զայս հրաժարականը :

Ատենապետ էֆէնտին կը հաղորդէ ժողովին թէ անձնական տկարութեան պատճառաւ այսօրուան նիստէն բացակայ են

- Տ. Խորէն Արքեպիսկոպոս
  - Տ. Արիստակէս քահանայ
  - Եղիազար էֆ. Մելիքեան
- որք նամակաւ յայտնած են պատճառներնին :

Ատենապետ էֆ. Օրակարգին անցնելէ յառաջ կը ներկայէ ժողովին խել մը թղթեր , որ հետզհետէ եկած էին Գիււանին գրասեղանին վրայ , եւ կոպասէին Նախաքննիչ դիւանաց կազմութեան՝ անկ եղած դիւաններուն հաղորդուելու համար :

Ատենադպիր էֆէնտին կը կարդայ յիշեալ թղթերն՝ որ ահաւասիկ .

1.

Տեղեկագիր Սահմանադրութեան Աւերակէն  
Յանձնաժողովոյ

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ազգային ժողովն ասկէ առաջ յատուկ Յանձնաժողով մը կազմած է Սահմանադրութեան վերաքննութեանը համար , որ իր պաշտօնը կատարած եւ առանձինն տեղեկագրով հաղորդած է բոլոր Երեսփոխանաց , եւ Սահմանադրութեան փոփոխեալ տրամադրութեանց տեղեկագիրն ալ Յանձնաժողովոյ ան-

դամոց մեծագոյն մասէն ստորագրեալ հաղորդած է Գիււանին , որ այժմ պատահութիւն կունենայ ժողովին ներկայել :

Փոփոխեալ տրամադրութիւնը Ազգային  
Մահմանադրութեան

1. Չորս Տեսուչ Խորհուրդներէն եւ երեք Հոգաբարձութիւններէն Ուսումնական , Տնտեսական եւ Վանօրէից Խորհրդոց եւ Կտակաց Հոգաբարձութեան պաշտօնքն ու պարտաւորութիւնքը միանալով Տեսուչ ժողով անունով ժողով մը կը կազմուի , որուն կը վերաբերի նաեւ Ելեւմտից եւ Հիւանդանոցի Հոգաբարձութեանց մատակարարութեանցը վրայ հակողութիւնը Կրօնական եւ Քաղաքական ժողովոց պէս՝ ան ալ Ընդհ. ժողովէն ընտրեալ եւ անոր համարատու . որով Կեդրոնական Վարչութիւնը կ'ունենայ երեք ժողով . Կրօնական ժողով կըրօնական գործոց եւ յարաբերութեանց , Քաղաքական ժողով քաղաքական գործոց եւ յարաբերութեանց , եւ Տեսուչ ժողով բոլոր ուրիշ ազգային ներքին գործոց եւ յարաբերութեանց :

2. Կրօնական , Քաղաքական եւ Տեսուչ ժողովոց անդամոց թիւերն են համեմատաբար՝ 7էն մինչեւ 14 , Ելեւմտից եւ Հիւանդանոցի Հոգաբարձութեանցը՝ 3էն մինչեւ 7 , Դատաստանական Խորհրդոցը՝ 5 եկեղեցական եւ 3 աշխարհական՝ Պատրիարքական Փոխանորդով հանդերձ՝ ընդ ամէնը 7 . իսկ Թագական Խորհրդոցը՝ 3 էն մինչեւ 9 , որ իւրաքանչիւրին համարառու մարմնոց կողմէն կ'որոշուին :

3. Սոյն ժողովոց , Խորհրդոց եւ Հոգաբարձութեանց ամենուն ալ համարատուութիւնները՝ տարեկան են , պաշտօնավարութեանց տեւողութիւնները՝ երկու տարի , անդամները՝ վերընտրելի . եւ ամենն ալ պարտաւորութիւն ունին պաշտօնին շարունակել մինչեւ ցվաւերացումն իրենց յաջորդաց :

4. Ընդհանուր ժողովոյ անդամոց կէսը՝ հինգ տարին անգամ մը փոփոխակի կը ընտրուի :

5. Թէ թաղական եւ թէ երեսփոխանական ընտրողութեան միանգամայն՝ պայման են նաեւ , ազգային տարեկան ուղղակի տուրք տան , կարգալ գրել գիտնալն եւ ազգային ատենախմբ մը կողմէն քուէղրութեան դատա-

պարտուած չըլլալն . բայց կարգալ գրելու պայմանը՝ առայժմ բացառիկ է գաւառներու համար :

6. Եկեղեցականաց՝ Կրօնական ժողովոյ անդամութեան եւ Եկեղեցական Երեսփոխանութեան ընտրելութեանը համար , հինգ տարի առաջ ձեռնադրուած ըլլալու պայմանը վերցած է :

7. Ընդհանուր եւ Վարչական բոլոր ժողովոց եւ Խորհրդոց եւ Հոգաբարձութեանց՝ պակասեալ անդամոց թիւը՝ երբ երրորդ մասի հասնի լրացումը անհրաժեշտ է :

8. Ատեան կազմուելու համար պաշտօնի մէջ գտնուած անդամոց մեծամասնութիւնը կը փրնտրուի :

9. Վերաքննութիւնը՝ քանի հարկ տեսնուի՝ կը կատարուի .

Վերաքննիչ Յանձնաժողովը՝ երեք Վարչական ժողովներէն մէյմէկ կամ երկերկու անգամ , իսկ Ընդհանուր ժողովոյ մէյմէն կամ զուրսէն համեմատաբար 2 կամ 4 անձինք առնուելով , ընդ ամէնը՝ 5 կամ 10 անձանցմէ կը բաղկանայ :

1 Մարտ 1874

- Մարտի 1-ին Վ. Իւշիքեան
- Յովհաննէս Բ. Մելիքեան
- Թորոն Պէլեան
- Մարտի 1-ին Մ. Այվարեան
- Տեղեկագիր Մ. Էրզրէմեան
- Քրիստոսոս Դաւթբեկեան
- Օգոստոս Խոսրովեան

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Աւասիկ խնդիր մը՝ որ Սահմանադրութեան վերաքննելի կէտերուն կը վերաբերի , եւ որ կարեւորագոյն խնդրոց մէկն է . որոյ վրայ վիճաբանութիւն չբացուիր ժողովին մէջ , մինչեւ Նախաձեռնութեան դիւանին կարծիքը չառնուի . ուստի նախ նոյն դիւանին յղել պէտք է իբր օրինական խնդիր :

Ատենապետ էֆէնտի առաջարկեց եւ ժողովն արտասանեց զայս յղումը :

2.

Տեղեկագիր Կաթողիկոսական Կոնգրէսի  
Խնդրոց Յանձնաժողովոյ

Վսեմաշուք Ատենապետ Ազգային Երեսփոխանական ժողովոյ .  
Ամենայն Հայոց Վեհ. Հայրապետին կող-

մանէ 1872 Ապրիլ 20 թուով առ Ազգ. Երեսփոխանական ժողովն ուղղեալ կոնգրակին առթիւ նոյն տարուոյ Գեկա. 29 ին կազմուած Յանձնադրով՝ որ 12 անգամէ կը բաղկանար , իր քննութեանց արդիւնքը տեղեկագրելէ առաջ հարկ կը համարի իւր ակամայ յապաղման համար բացատրութիւն տալ պատկառելի ժողովոյդ : Այս յապաղումը երկու պատճառէ յառաջ եկաւ , նախ՝ իւր անդամոց ոմանց միեւնոյն միջոցի մէջ ճանապարհորդութեամբ բացակայութենէն , եւ երկրորդ՝ ազգային վարչական վիճակին ծանուցեալ տագնապներէն , որ անկարելի կընէին Յանձնաժողովոյս նստեւորուն շարունակութիւնը :

Յանձնաժողովս առաջին նստին մէջ իր պաշտօնը ճշդել ուղղելով Ընդհ. ժողովոյ ատենագրութեան մէջ հետեւեալը գտաւ :

« Յանձնաժողովոյ պաշտօնը պիտի լինի Վեհ. Կաթողիկոսին կողմանէ եկած վերջին կոնգրակին վրայ վիճաբանիլ եւ մտածելովէ այս խընդրոյն լուծման նկատմամբ ի՞նչ ընթացք արժան է բռնել եւ թէ Վեհ. Կաթողիկոսին ի՞նչ պատասխան տալ հարկաւոր է , եւ հետեւապէս այս խնդրոյն վրայ տեղեկագիր մը բերել Ընդհ. ժողովոյն » :

Այսպէս Յանձնաժողովս իւր պաշտօնը սահմանեալ գտնելէ ետեւ նկատողութեան առաւամենայն Հայոց Վեհ. Կաթողիկոսին կողմանէ եկած կոնգրակը , որոյ բովանդակութիւնն է հետեւեալը :

Նորին Վեհափառութիւնը՝ էջմիածնայ միաբան եպիսկոպոսներէն միոյն Ստոյ Կաթողիկոս ընտրուելու նոր եւ եկեղեցւոյ հնաւանդ սովորութեանց դէմ կը գտնէ , միանգամայն եպիսկոպոսական ուխտն յիշեցնելով « այսպիսի գործոց մը ձեռնամխելէ առաջ , Եկեղեցւոյ անխախտ կանոնաց եւ Տաճկաստանի Հայոց ազգային Սահմանադրութեան համեմատ պարտ եւ արժան իսկ էր , կ'ըսէ , Մայր Աթոռոյ հետ խորհրդակցիլ , եւ որովհետեւ այն ուխտին եւ երդման հեղինակը մենք չէինք , որպէս զի ջընջելու իրաւունք ունենայինք , այն ատեն հարկ կ'ըլլար մեզի Եկեղեցական ժողով գումարել ամեն կողմերէ եւ արժան ու օգտակար եղածն անօրինել . մենք այս ըսել ուղեցինք կ'ըսէ Նորին Վեհափառութիւնն առ Պատրարքն ուղղած հեռագրովնս . իսկ Ազգ. Վարչութիւնը հեռագրին միաբեր բոլորովին այլայ-

գրութիւնն ընդունելութեան գրուեցաւ եւ ընդունուեցաւ :

Յետոյ Ատենադպիր էֆէնտի ժողովին ներկայեց Սարգիսեան Յակոբ էֆ. ի հրաժարագիրը եւ կը կարդացուի, որ ահաւասիկ .

Ամենապատիւ Բարձր Ս. Պատրիարք Հայր Նախագահ Ազգ. Ընդհ. ժողովոյ .

Ազգային Ընդհ. ժողովոյ անդամակցութեանը շարունակութիւնը այսուհետեւ չեմ կարող շարունակել անձնական գրադմանցս պատճառաւ : Ուստի խնդրեմ պատկառելի ժողովէդ որ ընդունի սոյն երկտող գրութիւնս իբրեւ պարզ հրաժարագիր :

Յ Նոյ. 1874 Թ. Ս-բն-Ե-ն  
Կ. Պոլս

Եւ ժողովը ընդունեց զայս հրաժարականը :

Ատենապետ էֆէնտին կը հաղորդէ ժողովին թէ անձնական տկարութեան պատճառաւ այսօրուան նիստէն բացակայ են

- Տ. Խորէն Արքեպիսկոպոս
  - Տ. Արիստակէս քահանայ
  - Եղիազար էֆ. Մելիքեան
- որք նամակաւ յայտնած են պատճառներին :

Ատենապետ էֆ. Օրակարգին անցնելէ յառաջ կը ներկայէ ժողովին խել մը թղթեր, որ հետզհետէ եկած էին Գիւանին գրասեղանին վրայ, եւ կսպասէին Նախագինիչ զիւանաց կազմութեան՝ անկ եղած զիւաններուն հաղորդուելու համար :

Ատենադպիր էֆէնտին կը կարդայ յիշեալ թղթերն՝ որ ահաւասիկ .

1.

Տեղեկութիւն Սահմանադրութեան վերաբերելի Յանձնաժողովոյ

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ազգային ժողովն ասկէ առաջ յատուկ Յանձնաժողով մը կազմած է Սահմանադրութեան վերաքննութեանը համար, որ իր պաշտօնը կատարած եւ առանձինն տեղեկագրով հաղորդած է բոլոր Նրեպիտանաց, եւ Սահմանադրութեան փոփոխեալ տրամադրութեանց տեղեկագիրն ալ Յանձնաժողովոյ ան-

դամոց մեծագոյն մասէն ստորագրեալ՝ հաղորդած է Գիւանին, որ այժմ պատեհութիւն կունենայ ժողովին ներկայել :

Փոփոխեալ տրամադրութիւնը Ազգային Մանամադրութեան

1. Չորս Տեսուչ Խորհուրդներէն եւ երեք Հոգաբարձութիւններէն Ուսումնական, Տնտեսական եւ Վանորէից Խորհրդոց եւ կտակաց Հոգաբարձութեան պաշտօնքն ու պարտաւորութիւնքը միանալով Տեսուչ ժողով անունով ժողով մը կը կազմուի, որուն կը վերաբերի նաեւ Նրեւտից եւ Հիւանդանոցի Հոգաբարձութեանց մատակարարութեանցը վրայ հսկողութիւնը. կրօնական եւ Քաղաքական ժողովոց պէս՝ ան ալ Ընդհ. ժողովէն ընտրեալ եւ անոր համարատու . որով կեդրոնական Վարչութիւնը կ'ունենայ երեք ժողով . կրօնական ժողով կըրօնական գործոց եւ յարաբերութեանց, Քաղաքական ժողով՝ քաղաքական գործոց եւ յարաբերութեանց, եւ Տեսուչ ժողով բոլոր ուրիշ ազգային ներքին գործոց եւ յարաբերութեանց :

2. կրօնական, Քաղաքական եւ Տեսուչ ժողովոց անդամոց թիւերն են համեմատաբար՝ 7էն մինչեւ 14, Նրեւտից եւ Հիւանդանոցի Հոգաբարձութեանցը՝ 3էն մինչեւ 7, Գատաստանական Խորհրդոցը՝ 5 եկեղեցական եւ 3 աշխարհական՝ Պատրիարքական Փոխանորդով հանդերձ՝ ընդ ամէնը 7 . իսկ Թաղական Խորհրդոցը՝ 3 էն մինչեւ 9, որ իւրաքանչիւրին համարառու մարմնոց կողմէն կ'որոշուին :

3. Սոյն ժողովոց, Խորհրդոց եւ Հոգաբարձութեանց ամենուն ալ համարատուութիւնները՝ տարեկան են, պաշտօնավարութեանց տեւողութիւնները՝ երկու տարի, անդամները՝ վերընտրելի . եւ ամենն ալ պարտաւորութիւն ունին պաշտօնին շարունակել մինչեւ զվաւերացումն իրենց յաջորդաց :

4. Ընդհանուր ժողովոյ անդամոց կէսը՝ հինգ տարին անգամ մը փոփոխակի կըրորողուի :

5. Թէ թաղական եւ թէ երեպիտանական ընտրողութեան միանգամայն սլայման են նաեւ, ազգային տարեկան ուղղակի տուրք տալն, կարգալ գրել զիւանալն եւ ազգային ատենանի մը կողմէն քուէզրկութեան դատա-

պարտուած չըլլալն . բայց կարգալ գրելու պայմանը՝ առայժմ բացառիկ է գաւառներու համար :

6. Եկեղեցականաց՝ կրօնական ժողովոյ անդամութեան եւ եկեղեցական երեպիտանութեան ընտրելութեանը համար, հինգ տարի առաջ ձեռնադրուած ըլլալու պայմանը վերցած է :

7. Ընդհանուր եւ Վարչական բոլոր ժողովոց եւ Խորհրդոց եւ Հոգաբարձութեանց՝ պակասեալ անդամոց թիւը՝ երբ երրորդ մասի հասնի լրացումը անհրաժեշտ է :

8. Ատեան կազմուելու համար պաշտօնի մէջ գտնուած անդամոց մեծամասնութիւնը կը փրնարուի :

9. Վերաքննութիւնը՝ քանի հարկ տեսնուի՝ կը կատարուի .

Վերաքննիչ Յանձնաժողովը՝ երեք Վարչական ժողովներէն մէյմէկ կամ երկերկու անգամ, իսկ Ընդհանուր ժողովոյ մէջէն կամ գուրսէն համեմատաբար 2 կամ 4 անձինք առնուելով, ընդ ամէնը՝ 5 կամ 10 անձանցմէ կը բաղկանայ :

1 Մարտ 1874

- Մարտի 1. Իսթրաբուլ
- Յովհաննէս Գ. Միլլեան
- Թարսու Պէլլեան
- Մարտի 1. Մ. Այվազեան
- Տէլեֆու Մ. Էրսէրեան
- Քրէսոպոլիսի Ղազարեան
- Օֆէն Խոճաբեկեան

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Աւասիկ խնդիր մը՝ որ Սահմանադրութեան վերաքննելի կ'ետրուն կը վերաբերի, եւ որ կարեւորագոյն խնդրոց մէկն է . որոյ վրայ վիճաբանութիւն չբացուիր ժողովին մէջ, մինչեւ Նախաձեռնութեան զիւանին կարծիքը չառնուի . ուստի նախ նոյն զիւանին յղել պէտք է իբր օրինական խնդիր :

Ատենապետ էֆէնտի առաջարկեց եւ ժողովն արտասանեց զայս յղումը :

2.

Տեղեկութիւն կաթողիկոսական կոնքրէգի խնդրոյն Յանձնաժողովոյ

Վսեմաշուք Ատենապետ Ազգային Երեպիտանական ժողովոյ . Ամենայն Հայոց Վեհ. Հայրապետին կող-

մանէ 1872 Ապրիլ 20 թուով առ Ազգ. երեսփոխանական ժողովն ուղղեալ կոնքրէգին առթիւ նոյն տարուոյ Գեկա. 29 ին կազմուած Յանձնադուլս՝ որ 12 անդամէ կը բաղկանար, իր քննութեանց արդիւնքը տեղեկագրելէ առաջ հարկ կը համարի իւր ակամայ յապաղման համար բացատրութիւն տալ պատկառելի ժողովոյդ : Այս յապաղումը երկու պատճառէ յառաջ եկաւ, նախ՝ իւր անդամոց ոմանց միւսնոյն միջոցի մէջ ճանապարհորդութեամբ բացակայութենէն, եւ երկրորդ՝ ազգային վարչական վիճակին ծանուցեալ տախնասներէն, որ անկարելի կընէին Յանձնաժողովոյս նստեւուն շարունակութիւնը :

Յանձնաժողովս առաջին նստին մէջ իր պաշտօնը ճշդել ուղղելով Ընդհ. ժողովոյ ատենագրութեան մէջ հետեւեալը գտաւ :

« Յանձնաժողովոյ պաշտօնը պիտի լինի Վեհ. կաթողիկոսին կողմանէ եկած վերջին կոնքրէգին վրայ վիճաբանիլ եւ մտածել թէ այս խնդրոյն լուծման նկատմամբ ի՞նչ ընթացք արժան է բռնել եւ թէ Վեհ. կաթողիկոսին ի՞նչ պատասխան տալ հարկաւոր է, եւ հետեւեալէս այս խնդրոյն վրայ տեղեկագիր մը բերել Ընդհ. ժողովոյն » :

Այսպէս Յանձնաժողովս իւր պաշտօնը սահմանեալ գտնելէ ետեւ նկատողութեան առաւամենայն Հայոց Վեհ. կաթողիկոսին կողմանէ եկած կոնքրէգը, որոյ բովանդակութիւնն է հետեւեալը :

Նորին Վեհափառութիւնը՝ Էջմիածնայ միաբան եպիսկոպոսներէն միոյն Սոսյ կաթողիկոս ընտրուելը նոր եւ եկեղեցւոյ հաւանդ սովորութեանց դէմ կը գտնէ, միանգամայն եպիսկոպոսական ուխտն յիշեցնելով « այսպիսի գործոյ մը ձեռնամխելէ առաջ, եկեղեցւոյ անխախտ կանոնաց եւ Տաճկաստանի Հայոց ազգային Սահմանադրութեան համեմատ պարտ եւ արժան իսկ էր, կ'ըսէ, Մայր Աթոռոյ հետ խորհրդակցիլ, եւ որովհետեւ այն ուխտին եւ երդման հեղինակը մենք չէինք, որպէս զի ջընջելու իրաւունք ունենայինք, այն ատեն հարկ կ'ըլլար մեզի եկեղեցական ժողով գումարել ամեն կողմերէ եւ արժան ու օգտակար եղածն տնօրինել . մենք այս ըսել ուղեցինք կ'ըսէ Նորին Վեհափառութիւնն առ Պատրիարքն ուղղած հեռագրովս . իսկ Ազգ. Վարչութիւնը հեռագրին միտքը բոլորովին այլայ-

լած է տուած պատասխանովը եւ Սոյ խընդ-  
րոյն անցքերուն իսկութիւնը ուրիշ կերպարան-  
քի յեղաշրջած է, եւ ի վերջոյ կը յաւելու որ  
երկու պատգամաւորներ զրկուին յիշմիածին,  
մէկը բարձրաստիճան եկեղեցական եւ միւսը  
աշխարհական, որպէս զի պարզութիւն երկու  
կողմէն մտքերն ու գաղափարները եւ ինչ որ  
Ազգին համար գիտնալու եւ գործելու կարեւոր  
են խորհիւնք, որով կարենամք ապանի վտան-  
գին առաջքն առնուլ » :

Յանձնաժողովս խնդիրը հիմէն քննելու  
համար հարկ տեսաւ այս կոնդակին վերաբեր-  
եալ թուր պաշտօնական գրութիւններն աչքէ  
անցնել, որք են՝ Ա.Ե. Հայրապետին հեռագիրը,  
Քաղ. ժողովոյ պատասխանը, եւ Ազգ. Երես-  
փոխանական ու Քաղ. ժողովոց Սոյ խնդրոյն  
վերաբերեալ արձանագրութիւնները եւ ինչ, ելին :

Այս ամէնը Յանձնաժողովս մանրամասնա-  
բար քննութեան առնելէ ետեւ՝ նկատեց թէ  
առանց կանխաւ ամենայն Հայոց Ա.Ե. Հայրա-  
պետին հաւանութեանը զիմելու՝ էջմիածնայ  
միաբան եպիսկոպոսի մը Սոյ կաթողիկոս ըլ-  
լալը տեղի տուած է իրաց արդի վիճակին : Սա-  
կայն Ընդհ. ժողովն ալ կատարուած ընտրու-  
թիւնը վաւերացնելովը ազգային հնաւանդ սո-  
վորութեանց եւ ամենայն Հայոց Հայրապետու-  
թեան իրաւասութեանը դէմ գործել բնաւ մի-  
տում ունեցած չէ : Վասն զի ի սկզբան՝ Ընդհ.  
ժողովը « նախ յարաբերութեանց հաստատու-  
թեան եւ յետոյ Սոյ կաթողիկոսական ընտ-  
րութեան վաւերացման » իմաստուն որոշումը  
տուեր է, եւ այս որոշման համեմատ յատուկ  
Յանձնաժողով մ'ալ կազմեր է նոյն օրը, որ-  
պէս զի նախ յարաբերութիւնները հաստատուին  
եւ յետոյ Սոյ կաթողիկոսական ընտրութիւնը  
վաւերանայ : Սակայն մինչդեռ յարաբերութեան  
յանձնաժողովը իր պաշտօնը չէ սկսած իսկ գոր-  
ծել, Քաղ. ժողովը Սոյ կաթողիկոսական ընտ-  
րութիւնը կատարել տալով, երբ կրօն. ժողո-  
վը գոյութիւն ալ չունի եղեր, իբրեւ կատար-  
ուած իրողութիւն Ընդհ. ժողովոյ ատենը բե-  
րած է, եւ հաստատուելիք յարաբերութիւններն  
ընդունելուն համար ընտրեալ եպիսկոպոսէն  
խոստմնագիր մը առած ըլլալը մէջ բերելով  
յառաջքան զհաստատութիւն յարաբերութեանց,  
ընտրութեան վաւերացումը խնդրած է, պա-  
րագայից ստիպողականութիւն ցոյց տալով :

Ահաւասիկ խոստմնագրին պատճէնը .  
Ամենապատիւ Արքայան կղբայր եւ  
Ազգային կեդր. Վարչութիւն .

« Սոյ կաթողիկոսական ընտրութեան հա-  
ւամար Սահմանագրապէս գումարուած Գաւա-  
ռական ժողովոյն կողմէն քուէից բացարձակ  
« առաւելութեամբ նոյն ամբողջ կաթողիկոս  
« ընտրուելու մասին որքան ալ անձնական տկա-  
« րութիւնս եւ միանգամայն անբաւականութիւ-  
« նըս յայտնելով թէ ներկայ Գաւառական ժո-  
« ղովոյն բերանացի եւ թէ կեդր. Վարչութեան  
« հեռագրով հրատարակման մատուցի ալ նէ,  
« անկարելի ըլլալ ցոյց տրուելուն համար, ի  
« սէր Ազգիս եւ ի սէր խաղաղութեան՝ Աստու-  
« ծոյ ամենակարող զօրութեանն ապաւինելով  
« եւ կեդր. Վարչութեանդ օժանդակութեան  
« եւ ձեռնտուութեանը վստահանալով պարտա-  
« լորեցայ նոյն սահմանագրապէս եղած ընտրու-  
« թիւնը ընդունիլ, ուստի սոյն ամենածանր եւ  
« փափուկ պաշտօնը վարելու եղանակին մէջ,  
« ինչպէս Ս. էջմիածնայ կաթողիկոսը եւ Ս.  
« Երուսաղէմի Պատրիարքը, նոյնպէս նուաստս  
« ալ Ազգ. կեդր. Ընդհ. ժողովոյ յօգուտ մեծի  
« աթոռոյս կիսկիոյ եւ Հայաստանեայց Ս. Եկե-  
« ղեցւոյ ըրած որոշումները յարգել կը խոս-  
« տանամ :

1871 Նոյմ. 8 Խ. Միքայէլ Էդու. Արքայ  
Ատանա Երուսաղէմի Ե. Բերէոյ  
համայն վիճակացի .  
Բնագրին յար եւ նմանն է .  
Ինքնագրէր Թովմա

Ազգ. Ընդհ. ժողովը՝ Քաղ. ժողովոյ մէջ  
բերած ստիպողականութեան եւ հաստատուե-  
լիք յարաբերութեանց Սոյ նորընտիր կաթողի-  
կոսին կողմանէ ընդունուելու մասին տուած  
ապահովութեանցն առջեւ իր նախկին որոշումը  
փոխելով կատարուած ընտրութիւնը վաւերա-  
ցուցեր է, բայց ատու ինչպէս ըսինք, բնաւ  
միտում ունեցած չէ Եկեղեցւոյ հնաւանդ սովոր-  
ութեանց եւ ամենայն Հայոց Հայրապետու-  
թեան իրաւասութեանը դէմ գործելու . այլ  
ընդհակառակն ընտրութիւնը վաւերացնելով,  
բայց հաստատուելիք յարաբերութիւնները ա-  
մենայն Հայոց Ա.Ե. հաւանութեանը վերապահելովը,  
Ազգին եւ Եկեղեց-  
ւոյ օգտակար եւ Նորին վեհափառութեան իսկ  
հաճելի գործ մ'ըրած ըլլալ կարծեր է :

Արդ՝ Յանձնաժողովս կեդրակացնէ թէ,  
քանի որ դիտում չկայ դործոյն մէջ եւ քանի որ  
կատարուած իրողութիւն մ'է, կը մնայ Ընդհ.  
ժողովոյն առ Վ.Ե. Հայրապետն ծանուցանել  
իւր այս պարագայիս մէջ ունեցած անկեղծու-  
թիւնը, եւ ըստ որում Վ.Ե. կաթողիկոսը եր-  
կու պատգամաւոր ուղած է սոյն խնդրոյն հա-  
մար բերան առ բերան խօսելու, Յանձնաժո-  
ղովս բնաւ արդեւք չ'տեսնէր Վ.Ե. Հայրապե-  
տին այս կամքը կատարուելուն մէջ, մանա-  
ւանդ կարեւոր իսկ կը դատէ : Այս պատգա-  
մաւորութիւնը առանց լիազօր իշխանութիւն  
ուսննալու կրնայ Նորին Վեհափառութեան հետ  
Սոյ եւ Աղթամարայ կաթողիկոսութեանց հա-  
մար հաստատուելիք յարաբերութեանց վրա-  
յօք ալ բանակցիլ՝ եւ միանգամ ընդ միշտ ա-  
ւարտել այս ծանր խնդիրը որ ստէպ կրնայ նո-  
րողիլ եւ Հայաստանեայց Եկեղեցւոյն միու-  
թեան ներդաշնակութեանը դէմ արդեւքներ  
յարուցանել :

Այս է Յանձնաժողովոյս կարծիքը Սոյ  
կաթողիկոսական խնդրոյն նկատմամբ ամենայն  
Հայոց Ա.Ե. Հայրապետին կողմանէ եկած կոն-  
դակի խնդրոյն լուծմանը համար :

15 Յունիս 1874 Անդամք Յանձնաժողովոյ  
ԱՏԵՆԱԴՊԻՐ ԱՏԵՆԱՊԵՏ  
Թ. Պէլէ-ն. Ներ-է- Էդու-է-դու-  
Մ-բէրէ Եդու. Մ-բէրէ-ն. Վ-բ-է-դ-է-դ-  
Վ. Ս. կ-բ-է-դ-է-դ Մ-շոյ  
Տէր Ս-հ-է- Բ-հ-է-նոյ Խ-բ-է-ն Ա-բ-է-դ-է-դ-  
Տ. Ս-բ-է-ն. Ն-բ-է-դ-  
Օ. Խ-ն-է-ն-է-ն. Մ-բ-է-ն- Է-բ-դ-  
Պ. Պ-ն-է-ն-է-ն. Ի-բ-է-ն-է-ն.  
Պ. Փ. Յ-է-ն-է-ն-է-ն +նոյ.  
Մ-բ-է-ն.

Պատգամաւորութիւն զրկուելու մասը ի  
բաց առեալ կ'ստորագրեն մ.  
Յ-է-ն. Յ-է-ն-է-ն-է-ն

Մ-ն-է-ն. — Տեղեկագիրս ստորագրողներն դուրս կը  
գտնուին երկու անգամներ . որոց մին Վ.Ե.Մ. Ստեփան  
փաշա՝ թէն Յանձնաժողովոյս առջի նիստերուն ներկայ  
գտնուած, բայց վերջերս ազգային ամեն պաշտօններէ  
հրատարակման տուած է . իսկ երկրորդը Մեծ. Մերեւէմ.  
Գուլի Յ. Էֆէնտի, մէկ անգամ մը միայն ներկայ գըտ-  
նուած ըլլալուն մերժած է ստորագրել տեղեկագիրս :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ինչպէս ժողովը կը տես-  
նէ, ասանկ շատ մը հին խնդիրներ կան հոս

զիդուած, որ պիտի ներկայուին . կարելի է որ  
ժողովը կարեւորութիւն չտայ ոմանց կամ չու-  
զէ անցեալ խնդիրներու վերագառնալ, այն ա-  
տեն հարկ չմնար Նախաքննիչ դիւանաց յղել .  
ուստի կը հարցնեմ ժողովին թէ այս խնդիրը  
Նախաքննութեան յղել հարկ կը տեսնէ թէ ոչ :

ՄԱՁԼ ՄԵԱՆ Յ. ԷՖ. — Նախաքննիչ դի-  
ւանները կանոնադրութեան տրամադրութեան  
համաձայն ժողովին գործոց դիւրութեանը հա-  
մար սահմանուած են . ուստի որ եւ է նոր խըն-  
դիր մը ժողովին մէջ վիճարանութեան չդրուած  
Նախաքննիչ դիւաններէն մէկին յղել պէտք է .  
իսկ այս կ-բ-է-դ-է-դ-է-ն կ-բ-է-դ-է-ն արդէն  
յղուածի պէս է . վասն զի միւսնոյն պաշտօնով  
յանձնաժողով մը կազմուած եւ անոր յանձնը-  
ւած է . այս տեղեկագիրն ալ զոր նոյն յանձ-  
նաժողովը բերած է, կարծեմ թէ ժողովը գո՞-  
րնելու չափ արդիւնաւոր է . հետեւապէս հարկ  
չեմ տեսներ Նախաքննութեան յղել . ժողովը  
կրնայ անմիջապէս իւր քուէոյն կամ ընդունիլ  
եւ կամ մերժել :

ԻՓԷԿՃԵԱՆ Հ. ԷՖ. — Այս խնդիրը թե-  
թեւ չէ որ անմիջապէս քուէի դրուելով կամ  
ընդունուի եւ կամ մերժուի . թէեւ իրաւ է  
Մաղմիան Է.Ֆ. ի ըսածը թէ արդէն կերպիւ մը  
Նախաքննութեան անցած կը համարուի այս .  
սակայն որովհետեւ խնդիրը ծանր է, եւ առա-  
ջարկութիւն մը կայ յանձնաժողովոյ տեղեկագ-  
րին մէջ, որուն կրնան շատերը համաձայնիլ  
կամ ոչ, եւ թերեւս շատերուն համար լուսա-  
բանութեան կարօտ լինի այդ պատգամաւորու-  
թիւն զրկուելու առաջարկն . ուստի պէտք է Նա-  
խաքննիչ դիւանին յղել եւ անոր կարծիքն առ-  
նուելէ ետեւ վիճարանութեան ենթարկել . եւ  
կամ թէ ոչ այժմէն խնդրոց կարգն անցնել եւ  
վիճարանութեան դնել ժողովին մէջ :

ՊԷԿԵԱՆ Թ. ԷՖ. — Խօսք կուղեմ :  
ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Չէք կրնար խօսիլ, ո-  
րովհետեւ արդէն մէկը թեր եւ մէկն ալ դէմ  
խօսեցաւ . հիմա կը մնայ ինձ ժողովին կամքը  
հարցնել :

ՊԷԿԵԱՆ Թ. ԷՖ. — Օրինական կէտի մը  
վրայ է խօսելիքս :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Խօսքը Պէկեան էֆէն-  
տիին է :

ՊԷԿԵԱՆ Թ. ԷՖ. — Այսպիսի մեծ խնդիր  
մը անբաւական նիստով չենք կրնար վիճարա-  
նութեան ենթարկել եւ ընդունիլ կամ մերժել .

իրաւ է թէ յղում արտասանելու համար բաւա-  
կան կը համարուի նիստը , եւ կրնամք այժմէն  
որոշել եթէ նախաքննութեան պիտի յանձնուի .  
իսկ ընդունելութեան կամ մերժման համար չենք  
կրնար այսօր որոշել , այլ պէտք է Օրակարգն  
անցնի :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅՑ. — Այլ ասոր վրայ ուրիշին  
ներելի չէ խօսիլ . Ժողովին կամքն իմանալու  
համար քուէի պիտի գնեմ . բայց քուէարկու-  
թեանէ առաջ պէտք է յիշեցնեմ որ եթէ Ժողո-  
վը նախաքննութեան յանձնել չորոշէ՝ ըստ օ-  
րինի մերժած կըլլայ :

Անմիջապէս քուէի զրուելով որոշուեցաւ  
նախաքննութեան յղել :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅՑ. — Դարձեալ Ժողովին կամ-  
քը պիտի հարցնեմ . Զեռնհասութեան թէ Իրա-  
ւասութեան զիւանին պէտք է յղել , որովհետեւ  
երկուքին ալ կը պատկանի այս խնդիրը :

ՊԵՆԱՆ Թ. ԷՅՑ. — Կ'առաջարկեմ որ յիշ-  
եալ երկու զիւանները միանան այս խնդրոյն  
համար :

Ատենապետ էֆէնտի քուէի դրուելով յիշ-  
եալ երկու զիւանաց միացման առաջարկու-  
թիւնը , եւ Ժողովը որոշեց միացեալ երկու  
զիւանին յանձնել այս խնդիրը :

5 .

Առաջարկեմ իւրեւեմն էֆ. է .

Կ'առաջարկեմ որ նախաքննիչ Վիւանաց  
թիւն ութէն հինգի իջնէ այսպէս ,

Զեռնհասութեան զիւանն Իրաւասութեան  
զիւանին հետ .

Կալուածոց զիւանը Համարակալութեան  
զիւանին հետ .

Խմբագրական զիւանը Նախաձեռնութեան  
զիւանին հետ .

միանան , որովհետեւ ասոնք իրարու առնչա-  
կից են :

Այս կերպով Վիւանաց կազմութիւնն ալ  
կը պարզի եւ ձեռնհաս անձինք գանելու գոր-  
ծըն ալ կը զիւրանայ :

Կ. Ս. Իւրեւեմն էֆ. է .

4 .

Առաջարկեմ Պեյեմն էֆ. է .

Նկատելով որ Ազգային Ժողովոյն կանո-

նադրութեան 49, 50, 51 յօդուածները , որք  
որոշեալ 47 թուով իսկական անուամբ մեծա-  
մասնութիւն եւ օրինական ու իսկական մեծա-  
մասնութեանց սակասութեան ատեն ալ անոնց  
որոշող ձայնից միարանութիւն կը տրամադրեն,  
կը հակառակին Ազգային Սահմանադրութեան .

Նկատելով որ տիրող օրինաց հակառակող  
նոր օրէնք վաւերացնել ու գործադրել , առանց  
նախապէս հինը վերաքննելու կամ փոփոխելու ,  
հակասութիւն եւ ապօրինաւորութիւն է , ըստ  
որում երկու հակասական օրէնք միանգամայն  
գործադրութեան չեն կրնար դրուիլ :

Կառաջարկեմ որ , կամ կանոնադրութեան  
յիշեալ յօդուածները վաղ ընդ հուպ սրբադ-  
րուելով Սահմանադրութեան համաձայնեցուց-  
ուին , եւ կամ Սահմանադրութեան մեծամաս-  
նութեան յօդուածները վերաքննուին . բայց  
մինչեւ այն ատեն ալ սահմանադրական մեծա-  
մասնութիւն փնտռուի , ըստ անեղծելի օրինա-  
կան իրաւանց եւ ըստ որոշման վերջընթեր նըս-  
տի Ազգային Ժողովոյն :

25 Հոկտ. 1874

Թ. Պեյեմն էֆ. է .

5 .

Առաջարկեմ իւրեւեմն էֆ. է .

Ընդհ. Ժողովոյ վերջին նիստին ընդուն-  
ուած կանոնադրութեան մէջ Սահմանադրու-  
թեան հակառակ ինչ ինչ յօդուածներ լինելուն,  
կառաջարկեմ որ համաձայն նոյն կանոնադրու-  
թեան եօթերորդ յօդուածին յատուկ մասնա-  
ժողովով մը քննուին եւ բարեփոխին .

1. Կանոնադրութեան առաջին յօդուածը  
կըսէ « Ժողովոյ նիստերը կը բացուին մայիսի  
սկիզբը եւ ատենական շրջանը մարտի վերջերը  
կը լիննայ » : Իսկ ըստ Սահմանադրութեան 61  
յօդուածի ժողով կըլլայ երկու տարին անգամ  
մը եւ երկու ամիս կը տեւէ : Ուստի կամ կա-  
նոնադրութեան յօդուածը փոխելու է կամ  
Սահմանադրութեան 61 յօդուածը վերաքննեալ  
համարելու է օրէնսդր. որոշմամբ :

2. Պատրիարքի ամբաստանութեան վերա-  
բերեալ կանոնադրութեան 34 եւ 35 յօդուած-  
ները Սահմանադրութեան 6 յօդուածին համա-  
ձայն չեն , պէտք է համաձայնեցնել :

3. Կանոնադրութեան 14 յօդուածը հա-  
կառակ է Սահմանադրութեան 62 եւ 39 յօդ-  
ուածոց , ըստ իս Սահմանադրութեան 62 յօդուա-  
ծը պէտք է վերաքննեալ համարել , իսկ 39 ը ան-

փոփոխ թողուլ եւ կանոնադրութեան 14 յօդ-  
ուածի անոր վերաբերեալ տրամադրութիւնը  
թողուլ :

4. Սահմանադրութեան 59 եւ 36 յօդ-  
ուածները ըստ վերաքննութեան իսկ հակառակ  
են կանոնադրութեան 49 եւ 51 յօդուածոց :

5. Կանոնադրութեան 15 , 26 եւ 30 յօդ-  
ուածները մասամբ Սահմանադրութեան 59 եւ  
36 յօդուածոց , մասամբ ալ 37 յօդուածին հոդ-  
ւոյն հակառակ են :

6. Կանոնադրութեան 47 յօդուածի Գ.  
Գ. 2. եւ է. պարբերութիւնը համաձայն չեն  
Սահմանադրութեան նոյն նիւթոց վերաբերեալ  
տրամադրութեանց :

7. Կանոնադրութեան 62 եւ 91 յօդուա-  
ծոց տրամադրութիւնը նոյնպէս հակառակ են  
Սահմ. հիմնական սկզբանց , այն է օրինաւոր  
մեծամասնութեան :

8. Կանոնադրութեան վերջին յօդուածը  
Սահմանադրութեան վրայ հիմնուած չէ . ուստի  
եւ անոր հակառակ է :

9. Սահմանադրութեան 99 յօդուածը հա-  
կառակ է կանոնադրութեան 7 յօդուածի վեր-  
ջին պարբերութեան :

Ասոնցմէ զատ մասնաժողովոյ ուշադրու-  
թիւնը պէտք է հրաւիրել կանոնադրութեան  
17 , 18 , 25 , 34 , 43 , 60 , 66 , 89 , 90 , 94  
յօդուածոց վրայ :

Այս վերջնոյն առաջին պարբերութիւնը  
գլխովին հակառակ է նոյն կանոնադրութեան  
29 , 85 եւ 84 յօդուածոց տրամադրութեանցը,  
որք կը հաստատեն ժողովրդի ունկնդրութեան  
իրաւունքը ընդհ. Ժողովոյ նիստերուն :

18 Հոկտ. 1874

Հ. Իֆէյեմն էֆ. է .

6 .

Գործիւն առաջարկեմ իւրեւեմն էֆ. է .

Գալ նիստին ընդհ. Ժողովը իր Նախաքն-  
նիչ զիւանաց ընտրութիւնը պիտի կատարէ՝ իր  
կանոնադրութեան եւ վերջին նիստին որոշած  
խնդրոց կարգին համաձայն : Բայց որովհետեւ  
Ընդհ. Ժողովոյ ընթացից արգիւնաւորութիւնն  
ու օրինաւորութիւնը մեծ մասամբ այդ զիւա-  
նաց կազմութեան կատարելութենէն կախեալ  
է , որովհետեւ կանոնադրութիւնը Սահմանադ-  
րութեան ինչ ինչ յօդուածոց հակառակ տրա-  
մադրութիւնը կը պարունակէ , ինչպէս որ

Ընդհ. Ժողովոյ վերջին նիստին գրով ներկայա-  
ցուցեր եմ , եւ որովհետեւ Ընդհ. Ժողովը այդ

կանոնադրութիւնը ընդունել է ի պահանջել  
հարկին զայն սրբադրելու պայմանաւ , կառա-  
ջարկեմ որ կանոնադրութեան 7 յօդուածը ,  
նոյնպէս եւ 8 ին մէկ պարբերութիւնը սրբադ-  
րելէ ետք ձեռնարկէ զիւանաց կազմութեանը :

Գիւանաց կազմութեանէն առաջ սրբադրել  
կառաջարկեմ կանոնադրութեան 91 յօդուա-  
ծըն ալ , որ անոնց իրաւասութեան սահմանին  
կը վերաբերի , Սահմանադրութեան հակառակ է :

19 Հոկտ. 1874

Հ. Իֆէյեմն էֆ. է .

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅՑ. — Այս 4 կտոր առաջար-  
կութեանց ամենն ալ , ինչպէս կը տեսնէ Ժո-  
ղովը , թէ եւ երկուքին ժամանակն ալ անցած  
է , կամ Սահմանադրութեան եւ կամ կանո-  
նադրութեան սրբադրութեանը կը վերաբերին :  
Սահմանադրութեան վերաքննութիւնը բաց է  
այսօր , եւ կանոնադրութեան վերաքննութիւնը  
միշտ բաց է , ինչպէս որ գիտէք . ուստի այս  
թղթերը Նախաձեռնութեան զիւանին պէտք է  
յղել :

Իֆէյեմն էֆ. է . ԷՅՑ. — (Կանոնադրութեան 7  
յօդուածոց վերջին պարբերութիւնը իւրեւեմն էֆ. է .) Սոյն  
պարբերութեան համաձայն՝ իբրեւ կանոնադ-  
րութեան սրբադրութեան վերաբերեալ խնդիր՝  
այս թղթերը պէտք է յատուկ մասնաժողովոյ մը  
յանձնել :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅՑ. — Այդ յօդուածը կ'ըսէ  
թէ հարկ եղած ատեն մասնաժողով ալ կրնայ  
կազմուիլ . ըսել չէ թէ այս խնդիրը շիրնար  
Նախաձեռնութեան զիւանին յղուիլ . սոյն զիւ-  
անը կարծիք մը պիտի տայ . անկէ ետքն է  
Ժողովին ընելիքը , կամ մասնաժողով մը կազ-  
մելով՝ նորէն անոր կը յանձնէ եւ կամ թէ ոչ՝  
իւր ատեանին մէջ վիճարանութեան կը գնէ :

Այս բացատրութեանէն ետեւ անմիջապէս  
քուէի գրուելով , միաձայն որոշուեցաւ Նախա-  
ձեռնութեան զիւանին յղել վերոյիշեալ առա-  
ջարկութիւնները :

7 .

Տեղեկութիւն Նիւրեմբերգ Լամպտար Ժողովոյ :

Ամենապատիւ Տեղապահ Սրբազան Հայր .  
Եկեղեցական Համագումար Ժողովս այս  
երրորդ անգամ գումարուելով ի Պատրիարքա-  
րանս , Աղթամարայ կաթողիկոսութեան խորհ-  
րոյն նկատմամբ Յանձնաժողովոյ բերած տեղե-





տաւորեցայ այս դիտողութիւնն ընել : Կը տեսնեմ որ իմ առ Վարչութիւնն ուղղած հարցմանցս վերջին մասը թէ եւ Օրակարգն անցաւ , սակայն առջի մասն անպատասխանի մընաց . ի հարկէ դալ նիստին այն ալ պիտի նայուի :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Այո , ուրիշ նիստի կը մնայ այն :

11.

Հրատարակելու Տարեան Առաջին Սիւնի Պէտքէ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Տատեան Առաջել Սիսակ պէյ պատճառարանեալ հրատարական զրկած է շատուց ՚ի վեր , որ տակաւին ժողովն չէ ներկայացած , արդեօք ժողովը կուզէ որ կարգացուի :

Զոյներ. — Այո՛ , այո՛ :

Ատենադպրութիւնի կը կարդայ .

Ամենապատիւ Նիսի . Սրբազան Հայր .

Օրինաւոր պատճառներ հարկեցուցեր են զիս հրատարիլ նախ Ազգ. Երեսփոխանական պաշտօնէս , յետոյ եւ Քաղ. Ժողովոյ անդամակցութենէն . ուստի եւ ոչ սակաւ ցաւ է ինձ չը կարել զործադրել Ամենապատիւ Սրբազան Հօրդ բարձր հրամանը , զոր անցեալ ամսոյ 28 թուականաւ շնորհեալ նամակաւ կը բարեհաճէիք հաղորդել նուաստութեանս հրաւիրելով ի ներկայութիւն Ընդհ. Ժողովոյ նիստերուն :

Եթէ բարձր սրբազնութիւնդ եւ Երեսփոխանական պատկառելի ժողովը բարեհաճին ուշադրութեան անուել պատճառարանեալ հրատարագրերս (որք չեմ զիտեր ինչ պատճառաւ դեռ յատենի ժողովոյդ չեն կարդացուած , եւ որոյ օրինակները աստ ներփակել պարտ համարեցայ) . անտարակոյս պիտի մակարերուի թէ՛ կրկնակի հրատեչտս ո՛չ թէ Ազգիս ծառայութենէն խոյս տալու պատրուակ մի է , այլ Սահմանադրութեան դէմ մերթ ընդ մերթ տեղի ունեցած հարուածները միանգամ ընդ միշտ իմովսանն արդիւն տալու բարեխախտն նպատակէ մը յառաջ եկած է :

Նուաստս , Ազգային Մահմանադրութեան ջերմ ճեղքնակաց միտն անարժան որդի , սրբազան պարտք ինձ համարել եմ մինչ ի կէտ կենցաղոյս յամենայն օրինապահ հանդիսանալ ըստ իմում բաւականութեանս , հետեւաբար խիստ է նուաստութեանս ո՛ր եւ իցէ պարագաներու մէջ հակառակ սկզբանցս եւ համոզմանս վարուել կը ծամաք հայրենի աւանդութեանց :

Ուստի կը համարձակիմ հայցել յայտմ մասին Սրբազան Հօրդ ընդարոյս ներողամտութիւնը եւ աղաչել որ շնորհ ընէք չը համարել զիմս նուաստութիւն իբր անհնադանդ հրամանաց Ամենապատիւ Սրբազնութեանդ , որո՛ւ մ միամ ահանաձական խորին յարգանօք :

Խոնարհ եւ անձնուէր ծառայ

1874 Յուլիս 5 Առաջին Սիւնի Տարեան

Պէտքէ

Վսեմաշուք Ատենապետ պէյ .

Ազգային Ընդհ. Ժողովը իւր 64 նստին մէջ , Սրբազան Պատրիարք Հօր եւ Քաղ. Ժողովոյ անդամոց հրատարման պատճառները արտայայտելու նպատակաւ , Քննիչ Յանձնաժողով մը անուանել որոշած ըլլալը , եւ իմ նուաստութեանս սոյն Յանձնաժողովոյ անդամակցութեան պատուոյն արժանանալը , անցեալ Օգոստոս 4 թուականով հրաւիրադրութիւն մեզ ազդարարած էիք :

Սոյն փափուկ պաշտօնը երբէք չէի ընդունել եթէ Յանձնաժողովոյս դատողական կերպարանը մը արուած ըլլար . բայց պատկառելի ժողովդ իւր բարձր խոնականութեամբը Յանձնաժողովոյս պաշտօն տուած էր յիշեալ հրատարմանց պատճառները միմիայն քննելով իւր տեղեկագիրը ներկայացնել . ուստի պարտ անձին եզեալ էինք չը շեղիլ բնաւ մեզ նշանակուած ուղեցոյցէն , որուն եւ իրօք ալ հետեւեցանք ինչպէս յայտնի է ներկայացեալ Տեղեկագրոյն առաջին մասէն :

Իսկ եթէ նոյնին երկրորդ վերջին մասը մեզ յանձնուած պաշտօնէն դարտուղեալ գործողութիւն մը դատուի , ինչպէս որ իրօք ալ այնպէս է , սա՛ պատկառելի ժողովոյդ բարձր խոնականութենէն խրախուսեալ մասնաւոր կարծիքնիս եւ զիտողութիւննիս յայտնելէ ուրիշ բան չէր . ազատ էր ուրեմն պատկառելի ժողովդ իւր լուրջ դատողութեանը զայն ընդունել կամ հերքել . բաւական էր որ Տեղեկագրոյն առաջին մասը , այն է հրատարմանց պատճառանց քննութեան արդիւնքը վիճաբանութեան ենթարկելով ըստարանուիլ եւ որ ինչանկն էր նոյնը ստորինել . այլ ընդհակառակը պատկառելի ժողովդ ի նկատի չառնելով բուն իսկ առաջին մասին քննադատութիւնը , թոյլ տուաւ որ նախապատրաստեալ պատգամաւորութեան խընդրոյ մը հետ , անձնային կրիք գրգռեալ անպա-

տնէ յուղմունք յարուցուի , որով բարձաւ ամենայն պատկառանք , պատակտեցաւ Յանձնաժողովոյս համախոհութիւնը , հիմնովին ոչնչացաւ տեղեկագրոյն էութիւնը , միանգամայն լիովին անպատուեցան ստորագրութեանցս հետ մեր անձնային պատիւը :

Արդ այսպիսի անակնկալ եւ ծանր հարուած մը միաւորեալ ընդ Ընդհ. Ժողովոյ փոքրագոյն մասին մեր ստորագրութեան դէմ 31 Օգոստոսի տուած վերջին հարուածոյն , ըստ իս աններելի եւ անընդունելի ըլլալով , պարտ անձին կը համարիմ հրատարիլ Երեսփոխանական բարձր պաշտօնէս , եւ կ'աղաչեմ Վսեմութեանը որ բարեհաճիք սոյն հրատարականս պատկառելի ժողովոյդ ընդունել տալոյ շնորհ չանխայել , որով շնորհապարտ կը կացուցանէք զիս որ եմս եւ միամ ձեզ յաւէտ բարեմաղթու :

1875 Սեպտ. 28 Առաջին Սիւնի Տարեան

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ահաւասիկ անցեալ դէպքերէ ծագած պատճառարանեալ հրատարական մը , որոյ վրայ երկու անձի միայն կրնամ խօսք տալ , մէկը թեր եւ միւսը դէմ խօսելու համար :

ՄԱԶԼՄԵԱՆ Յ. ԷՖ. — Տատեան Առաջել Պէյ իւր հրատարակին մէջ կ'առարկէ թէ ժողովն առանց Քննիչ յանձնաժողովոյ տեղեկագիրըն ուշադրութեան աննելու պատգամաւորութեան միջոցաւ անարգեց զմեզ . բնականաբար անպատուեցանք կ'ըսէ , եւ մեր ըրած քննութիւնն ապարդիւն ելաւ : Ասի սխալ է . վասն զի եթէ ժողովն այն օրը պատգամաւորութեան միջոցաւ նախորդ Սրբազան Պատրիարքին հրատարականն ետ առնել տալ հաճեցաւ , սակայն յայտնի է որ այս գործը Յանձնաժողովոյ տեղեկագրին ընթերցումէն ետեւ տեղի ունեցաւ . Նոյն տեղեկագրէն հասկցուեցաւ թէ նախորդ Քաղ. Ժողովոյ ըրած առանեւմէկ ամբաստանութեանց մէջէն միայն 3 կէտերու համար Յանձնաժողովը կը հրաւիրէր զՍրբազան Պատրիարքն բացատրութիւն տալ ժողովին . միւս 3 կէտերու մասին կը հաստատէր թէ Մահմանադրութեան համեմատ վարուած է Սրբազան Պատրիարքը : Ժողովը թէ եւ այն քանի մը կէտերուն վիճաբանութեանը մէջ չմտաւ . սակայն , ինչպէս ըսի արդէն՝ տեղեկագրէն իմացաւ որ 11 էն 3 ին մէջ արդարացած է Պատրիարքը նոյն իսկ Քաղ. եւ Խառն ժողովոց արձանագրութեանցը համեմատ , եւ մնացեալ 3 կէտերն ի բաց թողով չուղեց ընդունիլ Պատ-

րիարքին հրատարականը : Ուստի այն առարկութիւնն՝ որ կ'ընէ Տատեան պէյ իւր հրատարակին մէջ եւ իրեն անպատուութիւն եղած կը համարի , տեղի չունի . եթէ պիտի հրատարի պարզապէս կրնայ հրատարիլ . իսկ մէջ բերած պատճառն անընդունելի է :

ՊԵՆԵԱՆ Թ. ԷՖ. — Արդէն ես այնպէս կը տեսնեմ Տատեան պէյի հրատարականէն թէ իրեն անարգանք եղած է . տարակուսելի կէտ մը կար որ ասով կը պարզուի . վասն զի մեք իսկ կը զարմանայինք թէ ինչպէս Քննիչ յանձնաժողովը մէկ կողմէ կ'արդարացնէր զՕրիմեան Սրբազան , եւ միւս կողմէ կ'առաջարկէր որ թէ անոր եւ թէ Քաղ. Ժողովոյ հրատարականներն ընդունուին . հանելուկ մ'եղած էր այս մեզի համար . Տատեան պէյ կը լուծէ այս հանելուկն իւր հրատարագրով , եթէ պիտի մտնենք այս խնդրոյն մէջ , պէտք է վիճաբանութիւն բացուի ըստ օրինի : Տատեան ըսել կ'ուղէ թէ դաւի մը եկած է :

ԻՓԵՆԵԱՆ Հ. ԷՖ. — (Ընդդէմէ) Այսինքն՝ կ'ամբաստանէ զժողովն :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Խօսք չունիք , իփեկճեան էք :

ՊԵՆԵԱՆ Թ. ԷՖ. — (Շարունակելով) Փոքրամասնութեան մը կողմէ դաւի եկանք ըսել կ'ուղէ . ժողովոյն արժանապատուութեան դէմ բառ մը չարտասանէր . այլ փոքրագոյն մասին դէմ խօսելով կը հետեւեցնէ թէ Յանձնաժողովոյ ձայնը խեղդուեր է , որուն անդամներէն մէկն ալ ինք է , եւ Յանձնաժողովոյ առաջարկութեանէն տարրեր ու անոր հակառակ առաջարկութիւն մը երեւան գալով քուէի դրուեր է փոքրագոյն մասի մը աճապարանօք :

ԿՐԾԻԿԵԱՆ Յ. ԷՖ. — (Ընդդէմէ) Խնդրոյն մէջ մտնել չորոշուեցաւ , ինչո՞ւ կը մտնէք :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Խնդրեմ , Պէկեան էք . չարունակէ եւ չուտ լմընցուր :

ՊԵՆԵԱՆ Թ. ԷՖ. — (Շարունակելով) Վերջապէս կրտեմ թէ Տատեան պէյ եթէ իւր հրատարագրին մէջ գանգատ կ'ընէ որ անարգանք եղած է իրեն , պատճառն այն է որ Յանձնաժողովոյ ձայնը լսելի չէ եղած : Մանաւանդ որ Յանձնաժողովոյ մէջ՝ ինչպէս լսած եմ իւր անդամներէն ոմանց բերնէն , պայման կայ եղեր որ համակամ խորհրդով պիտի խօսին ժողովոյն մէջ . բայց Յանձնաժողովոյ անդամներէն մէկն այս պայմանին հակառակ ինքնակամ խօ-

սեր է, որուն կ'ակնարկէ նաև Տատեան պէյի բողոքը:

Ատենապետ էֆէնտի քուէի կը դնէ Տատեան Առաքել պէյի հրաժարականն իրրեւ պարզ հրաժարական ընդունիլ կուզուի թէ ոչ: Սակայն փորձը տարակուսանաց ենթարկուելով, քուէարկութիւնը կը կրկնուի, եւ 18 քուէի դէմ 27 քուէով չընդունիր ժողովը Տատեան Առաքել պէյի պատճառաբանեալ հրաժարականը:

ԻֆէկիճեԱն Հ. էֆ. — Այս մասին կանոնական դիտողութիւն մ'ունիմ: Առաքել պէյի հրաժարականը պատճառաբանեալ ըլլալուն համար չընդունուեցաւ ժողովէն. ըստ իս պէտք է նաև որոշել որ անոր հրաժարման պատճառըն ըստ օրինի քննուի. վասն զի այնպէս կը հասկընամ թէ կ'ամբաստանէ նա զժողովն. եթէ իրաւունք ունի պէտք է քննութեամբ երեւան ելնէ. եւ եթէ իրաւունք չունենալը հաստատուի, այնուհետև ընդունուի իւր հրաժարականն իրրեւ ի պատիւ. կը հարցնեմ Գրեանին թէ այդ հրաժարողին մը թուականաւ եկած է:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Հրաժարողիւրը 1875 սեպտեմբեր 28 ի թուականը կը կրէ. եւ ան ատենէն ժողովին ներկայացուած չըլլալուն համար 1874 յուլիս 5 թուականաւ ուրիշ նամական մը հրաժարողին պատճէնն ալ հաղորդեր է, որ նոյնպէս ցարդ չէր կարողացուած:

ԻֆէկիճեԱն Հ. էֆ. — Գրեանը պատասխանատու է, ինչո՞ւ չէ կարողացուեր մինչև հիմա:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Եթէ պատասխանատուութիւն մը կայ, արդի Գրեանինը չէ այդ:

ԻֆէկիճեԱն Հ. էֆ. — Կ'առաջարկեմ այդ հրաժարողին իրրեւ խնդիր յղել նախաքննիչ գրեաններէն մէկուն որու որ անկ է:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Առաջարկութիւննիդ պէտք է գրաւոր կերպով ներկայէք:

12.

Գրեանը — Գրեանը ԻֆէկիճեԱն էֆ. է:

1. Կանոնադրութեան 7 յօդուածին համաձայն ձեռննաս գրեանաց եւ մասնաժողովոց միջոցաւ քննուին երկու հրաժարեալ Քաղ. ժողովոց համարատուութիւնը:

2. Պայանքեան, Հովուեան եւ Կրճիկեան էֆէնտիներու Քաղ. ժողովոց անդամակցութենէ հրաժարման պատճառները:

3. Հրաժարեալ Քաղ. ժողովոց մէկ նիստին Սամաթիացոց եւ Մշեցոց մէջ տեղի ունեցած

կաւոյն պատճառները եւ Քաղ. ժողովոց անդամոց ունեց դէմ եղած բռնաբարութիւնը:

4. Ընդհ. ժողովոց 63 նիստին ժողովրդեան կողմէն ներկայացած հանրագրութիւնը. նոյնպէս եւ 74 ի բացման 4 նիստին մատուցուած հանրագրութիւնը:

5. Յիսուսեւմէկ երեսփոխանաց Գրեանի առաջարկութեան նպատակը եւ անոր ապօրինի ներկայացման եւ գործադրութեան եղանակը:

6. Կիլիսիանեալ նիստի հակասական հրաւիրողիւրը, որ տեղի տուաւ ժողովրդային յուզմանց:

7. Ընդհ. ժողովոց երկու ատենապետաց հրաժարման պատճառները, հրաժարում, որ ժողովիս չէ ներկայացած օրինաւոր եղանակաւ:

8. Երիմեան Հայրիկի հրաժարման պատճառները, որ նոյնպէս ժողովիս չէ ներկայացած:

9. Ապաժաման հրաժարեալ Քաղ. ժողովոց անդամոց Երիմեան Հայրիկի դէմ ըրած ապաժաման ամբաստանութիւնը:

10. Ընտրողաց մեծ մասին երեսփոխանական ընտրութեանց չմասնակցելուն պատճառները (Եթէ ընտրողաց մեծագոյն մասը ընտրութեան չէ մասնակցած, ըստ իս երեսփոխանական ընտրութիւնը անվաւեր համարելու է):

18 Հոկտ. 1874 Հ. ԻֆէկիճեԱն

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ինչպէս ժողովը կը տեսնէ, անցեալ դէպքերու կը վերաբերին այս առաջարկութիւնըն ալ՝ զոր Իֆէկիճեան էֆ. կը բերէ. բողոք մըն է այս՝ Վարչութեան մը դէմ որ հրաժարած է արդէն եւ նորն եկած անոր տեղ: Իբրև անդամ ժողովին կ'ըսեմ թէ կարեւորութիւն չունի այս բողոքը. իբրև ատենապետ կը հարցնեմ թէ ժողովը կուզե՞ արդեօք այս առաջարկութիւնը նախաքննիչ գրեաններէն մէկուն յղել թէ ոչ:

Տ. ՄԱՏԹԵՆՍ ՎՐԴ. ԻԶՄԻՐԼԵԱՆ. — Իֆէկիճեան էֆ. ի առաջարկութիւնը խիստ կարեւոր կը գտնեմ, եւ կ'առաջարկեմ որ քննութեան յանձնուի. որպէս զի այդ քննութեան արդեամբ անցեալ դէպքերը լուսաբանուելով՝ ապագային մեր ընթացքն ուղղել կարողանանք:

Զոյնէր. — Կը կրկնեմք Մատթէոս վարդապետին առաջարկութիւնը:

Անմիջապէս քուէի դրուելով, 8 քուէի

դէմ 29 քուէով որոշուեցաւ Իֆէկիճեան էֆ. ին առաջարկութիւնը յանձնել Երաւասութեան գիււանին նախաքննութեանը:

ԸՆՏՐՈՒԹԻՒՆ Գ. ԱՏԵՆԱՊԵՏԻ

Ատենապետ էֆէնտի Օրակարգին անցնելով, կը հրաւիրէ երեսփոխանները ընտրութիւն Գ. Ատենապետի:

Անմիջապէս քուէարկութիւնը կսկսի Գ. Ատենապետի ընտրութեան համար, եւ քուէհամարի քննիչ կ'որոշուին վիճակաւ.

Table with 2 columns: Name and Position. Includes Բարսեղ էֆէնտի, Կարապետ, Խաչատուր, Քրիստոստուր.

Թիւ քուէարկուաց էր 41: Քուէարկութեան միջոցին բացակայութեան պատճառաւ քուէի չմասնակցեցան՝

Table with 2 columns: Name and Position. Includes Տ. Ներսէս Վ. Ասլանեան, Տ. Յովհաննէս Ք. Մկրեան, Եսայի էֆ. Անուխեան, Սարգիս, Պօղոս, Միքայէլ, Յակոբ, Սիմոն, Կարապետ, Գրիգոր, Գրիգոր, Տիգրան, Մարտիրոս, Կարապետ, Նշան.

Քուէհամարը կատարուելով եւ 1 քուէթուղթ պարապ ելնելով, մնաց թիւ քուէարկուաց 40. եւ որովհետև ոչ ոք բացարձակ առաւելութեան թիւ ստացած էր, համեմատական քուէարկութիւն կատարել հարկ եղաւ առաւելագոյն քուէ ստացողներէն երկուքին վրայ, որք են՝

Յակոբ էֆէնտի Կոստանդեան քուէ 11  
Մատթէոս վարդապետ Իզմիրլեան « 10

ՊէկեԱն Ք. էֆ. — Քուէարկութեան արդիւնքը ցոյց կուտայ թէ եկեղեցական մը քուէ պաւած է ժողովին Ատենապետութեան համար:

ուրիշ ատեն ալ ըսած եմ, թէ եւ չեմ ուզեր խօսիլ զնել եկեղեցականին ու աշխարհականին մէջ ազգային պաշտօնէութեանց մասին, սակայն այս անխորութիւնը յարգելով հանդերձ անպատշաճ կը գտնեմ եկեղեցականի մը ատենապետ ընտրուիլն. եւ ինչո՞ւ. վասն զի ունինք արդէն եկեղեցական նախագահ մը եւ աշխարհական ատենապետ մը. ինչո՞ւ Սրբազան Պատրիարքը չըլլայ միանգամայն ատենապետ ժողովին, եթէ եկեղեցական ատենապետ մը պիտի դրուի: Իրաւ է թէ Եւրոպայի մէջ ատենապետը միանգամայն նախագահ է ժողովոյն. իսկ մեր մէջ ատենապետը միանգամայն նախագահ չըլլոնար ըլլալ. եւ ինչ կ'իկնէ ասկից. այսօր վարդապետ մը կ'ընտրուի ատենապետ, վաղն ալ թերեւս եպիսկոպոս մը. ասոր հետեւանքը խիստ ծանր է. նախանձորգութիւն կը ծագի եպիսկոպոս ատենապետին եւ պատրիարք նախագահին մէջ. ալ դուք մտածեցէք թէ ինչ մեծ անտեղութիւնք յառաջ կուգան ասկէ: Իմ գիտողութիւնս սկըզբունքին վրայ է, սկզբունքն ընդունելի չէ, վասն զի հետեւանքն ազգայինաւ է. ապա թէ ոչ կամ պէտք է ջնջուի աշխարհական ատենապետը եւ նախագահն ըլլայ ատենապետ միանգամայն, եւ կամ գիււանին զլուխն եկեղեցական անցնելու չէ: Ես կ'առաջարկեմ որ Սահմանադրութեան մէջ թէ եւ այս մասին որոշ տրամադրութիւն մը չը կայ, բայց երեսփոխանք ծագելիք անտեղութիւնը հեռատեսելով քուէ շրտան եկեղեցականի մը՝ ատենապետութեան համար:

Տ. ԱՄԲՐՈՍԻՈՍ Վ. ԻՍԿԵՆՏԵՐԵԱՆ. — Պէկեան էֆ. նոր առաջարկութիւն մը կը բերէ՝ բոլորովին անպատշաճ այս պահուս՝ երբ առաջին քուէարկութիւնն եղաւ. եւ մնաց համեմատականի: Ես կ'ըսեմ թէ այս առաջարկութիւնն իրրեւ նոր խնդիր մը պէտք է գրով հաղորդէ գիււանին եւ յանձնուի նախաքննիչ գիււաններէն մէկուն որում որ անկ է, որպէս զի այդ սկըզբունքն ինչպէս ինք կ'ըսէ, ազգայինաւ է թէ չէ, քննուի եւ լուսաւորուի ժողովը: Իսկ մենք մեր սուղ ժամերուն պէտք է խնայենք եւ քուէարկութիւնը շարունակենք:

ՊէկեԱն Ք. էֆ. — Իմ նպատակս դիտողութիւն մ'ընել էր միայն եւ չէ թէ քուէարկութիւնը խախտուի:

Այս միջադէպը գոցուելէն ետև անմի-

Հասկնա համեմատական քուէարկութիւնն սկսաւ : Այս անգամ քուէարկուաց թիւն էր 37 : Քուէարկութեան միջոցին բացակայութեան պատճառաւ քուէի չմասնակցեցան՝

Տ. Թագէտո եպիսկոպոս	
Տ. Ներսէս վարդապետ Ասլանեան	
Տ. Գրիգոր քահանայ Աճէմեան	
Մեթոպ էֆէնտի Այվատեան	
Եսայի « Անուխեան	
Սարգիս « Արտապեան	
Կարապետ « Խաչիկեան	
Պօղոս « Մովսիկեան	
Միքայէլ « Մամիկոնեան	
Սիմոն Պէյ Մազսուտեան	
Յակոբ էֆէնտի Նորատունկեան	
Սիմոն « Նորատունկեան	
Կարապետ « Շահպաղեան	
Սերովբէ « Պատճաճեան	
Գրիգոր « Սէլիմիէճեան	
Կարապետ « Փափաղեան	
Տիգրան « Սինանեան	
Նշան « Քաղապեան	
Նշան « Օտեան	

Քուէ համարը կատարուելով, արդիւնքը քննչաց միջոցաւ Գիւանին՝ եւ Գիւանին կողմէն ալ ժողովին հաղորդուեցաւ, որ ահաւասիկ Կոստանդեան էֆէնտի քուէ 23 Մատթէոս վարդապետ » 9 Հետեւապէս Կոստանդեան Յակոբ էֆ. երրորդ ատենապետ ընտրուեցաւ :

ԱՄԲՈՂՋԱՅՈՒՄ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ

Ատենապետ էֆէնտի Քաղ. ժողովոյ պակասած Յ անդամոց ընտրութեան համար պատրաստուած կրկնապատիկ ընտրելեաց ցանկին օրինակները երեսփոխանաց ցրուել տալէ ետեւ, յայտնելով որ թէ եւ իւր անունն ալ նոյն ընտրելեաց մէջ գրուած է, սակայն իւր կարողութիւնը չը տանելուն համար չկրնար ընդունիլ Քաղ. ժողովոյ անդամակցութեան պաշտօնը, կը խնդրէ երեսփոխաններէն որ իրեն համար քուէ չըսան, Յետոյ նոյն ցանկը քուէի կը դնէ, եւ 1 քուէի դէմ ընդհանուր հաւանութեամբ կընդունուի :

Ատենապետ էֆէնտին կը յայտարարէ նաեւ թէ իւրաքանչիւր երեսփոխան պարտաւոր է

սոյն ցանկին մէջէն Յ անուն աւերել եւ Յ անուն թողուլ, եւ կարող չէ գրաւել ուրիշ անուն մը դնել, որովհետեւ ցանկը զեղչելի է եւ ոչ սրբազրելի :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Չը գիտենք թէ Քաղ. ժողովոյ հրաժարեալ Յ անդամներն որո՞նք են. նախ ատենք զիտնալու ենք, եւ ատենց հրաժարականը ժողովին ընդունելութեան զըրուելէ ետեւ ըստ այնմ քուէարկութեան ձեռնարկելու ենք :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Քրիստոսաուր էֆէնտի պահանջումը կանոնադրական արարողութեան մը կը վերաբերի, եւ իրաւացի է. այդ արարողութիւնը մտացուել է, չէ թէ հիմա, այլ ասկէ երկու նիստ առաջ պէտք էր կատարուիլ այդ : Բայց ինչ որ է նէ եղեր է. հիմա ինչ հարկ անցեալին դառնալ. Սրբազան Նախագահն եւ Քաղ. ժողովն անոնց հրաժարականն ընդունելու ընտրութեան խնդիրը բերել են հոս : Հիմա ժողովին ծանօթութեան համար գոնէ հրաժարելոց անունները պէտք է կարդացուին :

Ատենապետ էֆէնտի կը կարդայ Քաղ. ժողովն հրաժարող Յ անդամոց անուններն իւրենց հրաժարման թուականին կարգաւ, որք են՝

- Ստեփան փաշա Ասլանեան
- Յակոբ պէյ Խանտանեան
- Պօղոս էֆէնտի Ժամակոչեան
- Առաքել Սիսակ պէյ Տատեան
- Մ. Մանուկ էֆէնտի Մանուկեան
- Ստեփան էֆէնտի Արզումանեան

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Հրաժարագրերն ինչ ո՞ր են :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Հարկ չկայ, ըսի, ժողովը ժամավաճառ չընելու համար. քանի որ Սրբազան Պատրիարքը հրաժարականին ընդունելու եւ ընտրութեան խնդիրը բերել է հոս, իբրեւ ստիպողական : Հիմա հրաժարականին ժողովին ընդունելութեան պիտի դնեմ, որպէս զի նոր ընտրութիւնը կատարուի :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. ԵՒ ԱՅԼ.Ք. — Հրաժարագրերն ալ պէտք է կարդացուին :

Ատենապետ էֆէնտի կարդաց հրաժարագրերը, եւ տեսնուեցաւ որ Ստեփան փաշա, Յակոբ պէյ եւ Մ. Մանուկ էֆ. իրենց անձնական տկարութեանը եւ զբաղմանցը պատճառաւ

հրաժարել են. իսկ Պօղոս էֆ. պակասեալ Վարչութեանը վերակազմելու համար իր պաշտօնակցաց հետ միանալէ ետեւ՝ իր պարտականութիւնը լրացած սեպելով հրաժարել է : Միայն Առաքել պէյի հրաժարականը պատճառաբանեալ է, ահա ասոր օրինակը :

Ամենապատիւ Սրբազան Հայր .

Ամսոյս 18 ին գումարեալ ժողովոյդ նիստին վերջերը Քատրղիւղի Թաղական Խորհրդոյ խնդրոյն վերաբերեալ մեծագոյն մասամբ ընդունուած որոշումը, ժողովականաց փոքրագոյն մասը բաղկացնող անդամակցաց միոյն հրաժարման սպանալեաց ճնշմամբ յետս կոչուիլը ըստ իմ համոզման՝ օրինաւորութեան գէ՛մ չարօրինակ հարուած մը ըլլալով, նա մանաւանդ իմ աղատ ջուէս ո՛ր եւ իցէ սպանալեաց եւ ճնշման կոթակայելը պատույ զգացմանցս հակառակ ըլլալով, չպիտի կարենամ այսուհետեւ Քաղ. ժողովոյ անդամակցութեան բարձր պաշտօնս վարել. ուստի պարտ անձին կը համարիմ ներկայիւս աղաչել սրբազնութեանդ, որպէս զի բարեհաճիք հրաժարականս ժողովոյդ ընդունել տալ, միանգամայն այս աւուր գումարելի Մասնաժողովոյն ներկայանալուս չսպասել :

1874 Յնվր. 21 Մնամ եւ այլն Պէչիկթաշ Առաքել Սէրէճ Տարեան

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Արզուման էֆ. էն հրաժարագիր չըկայ. բայց Քաղ. ժողովն ծանուցուած է անոր ալ բերանացի հրաժարած լինելը : Ուստի ի բաց թողլով Տատեան Առաքել Սիսակ պէյի հրաժարականն որ պատճառաբանեալ է, միւսներուն իբրեւ պարզ հրաժարական քուէի պիտի դնեմ :

ՊԷՅԻՍԱՆ Թ. ԷՖ. — Արզուման էֆ. ին հրաժարումը բերանացի է ըսիք. պատճառն ինչ է չը գիտենք. գոնէ տեղեկագիր մը պէտք էր Քաղ. ժողովէն. ուր է տեղեկագիրն. այն ալ չըկայ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ուրեմն նախ չորսին հրաժարականը քուէի կը դնեմ, որոնց հրաժարականը պարզ է, ինչպէս կարդացուեցաւ եւ լսեցիք :

Այս ըսելով քուէի գրաւ չորսին հրաժարականը, որք են

- Ստեփան փաշա Ասլանեան
- Յակոբ պէյ Խանտանեան

Պօղոս էֆէնտի Ժամակոչեան Մ. Մանուկ էֆէնտի Մանուկեան եւ ժողովը միաձայն հաւանութեամբ ընդունեց, իսկ Արզուման էֆէնտի անգիր հրաժարականի մասին Ատենապետ էֆէնտի ժողովին կը հարցնէ թէ պիտի ընդունի՞ կամ ոչ :

ՊԷՅԻՍԱՆ Թ. ԷՖ. — Ի՞նչպէս կրնայ ընդունելութեան գրուիլ հրաժարական մը, որու մէջ ձեւի պակասութիւն մ'եղած է. եթէ Արզուման էֆ. բանիւ բերանոյ միտն հրաժարած է, մեծ նախատինք է ժողովին գրաւոր հրաժարական չըտալը, եւ չեմ յուսար որ Արզուման էֆէնտի ժողովին այդպիսի անարդանք մ'ընելու զամ ըլլայ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Մեզի չը պատկանիր այժմ Արզուման էֆ. ին վարժունքը քննելու սրբազրել. հրաժարել է ինչ կերպով որ ուզեր է հրաժարել. թէ որ տարակոյս կայ նորա հրաժարմանը վրայ, անշուշտ Սրբազան Նախագահը կը բարեհաճի բացատրել :

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ — Արզուման էֆէնտի հրաժարած է. ասի բացատրութեան կարօտ չէ. բայց զիր մատուցած չէ, այլ քանի մը անգամ է որ Քաղ. ժողովն չէ եկած, եւ երբ ժողովին կողմէն հարցուեցաւ, պատասխան զրկեց թէ չկրնար շարունակել. կը ցաւիմ նորա աջակցութենէն զրկուելուս համար, քանզի ժողովին փորձառու եւ բանիբուն անգամներէն մէկն էր. սակայն իւր պաշտօնը շարունակել չուզէր :

Ատենապետ էֆէնտի քուէի կը դնէ Արզուման էֆ. ին հրաժարականը, բայց փորձը կը փոթի :

ԲՕԼՕԼԵԱՆ Ա. ԷՖ. — Խօսք կ'ուզեմ այս մասին :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Քօլօլեան էֆ. խօսք ուղեց, բայց քուէի չկրուած խօսք ուզելու էր. քուէի գրուելէ ետեւ խօսք չկրնար տըրուիլ ըստ կանոնադրութեան. բայց չզիտնալուն համար այս անգամ իբր բացառութիւն կուտամ :

ԲՕԼՕԼԵԱՆ Ա. ԷՖ. — Ըսուեցաւ թէ քանի որ Արզուման էֆ. գրաւոր հրաժարական տուած չէ՝ չկրնար ընդունուիլ, կրնար գրով ալ տալ, բայց չէ տուած. եթէ ժողովին հետ խաղալ ուղէ՛ յաւիտեան չըտար. երբ յաւիտեան չըզայ եւ չըհրաժարի գրով, միթէ իբր ժողո-

վական պիտի նկատեմք միշտ զինքը : Խնդիրը Սրբազան Հայր, Արզուման էֆ. ի աջակցութեանն զրկուելուն վրայ չէ, նորա անձնական արժանիքն արդէն ամենուս ծանօթ է . խնդիրն սկզբունքին վրայ է . միթէ յաւիտեան չըզայ իւր ակտը պարանպ պիտի մնայ : Մանաւանդ Սահմանադրութեան մէկ յօդուածը յայտնի կերպով կը տրամադրէ թէ երբ ժողովական մը իւրարու վրայ երեք անգամ բացակայ գտնուի ինքնին հրաժարեալ պիտի համարուի . ըսել է թէ պարզ կերպով տուած է նա իւր հրաժարականը եւ Սահմանադրութիւնն ընդունած է զայն . քանի որ այսպէս է, մենք ալ պէտք է զանի հրաժարեալ համարինք . այս է իմ կարծիքս :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Իրաւ է որ երբ կանոնը չը պահէք, աւելորդ խօսքերու եւ դիտողութեանց տեղի կուտաք : Ժողովն ինք պէտք է մտածէ որ եթէ մէկը խաղալ ուզէ իրեն հետ յաւիտեան գրաւոր հրաժարական չը տար . ժողովը չը կրնար ասանկ խաղ մը ընդունել . ուստի ես նորէն իրեն քուէին կը դիմեմ :

Թէ եւ Ատենապետ էֆէնտին վերստին քուէարկութեան փորձը կրկնել ուզեց . բայց նորէն առարկութիւններ ի դէպ եկան եւ փորձը զարձեալ չը յաջողեցաւ :

Ատենապետ էֆէնտի տեսնելով որ ժողովը տրամադիր չէ այս ընտրութիւնն այսօր կա-

տարել, եւ ատենը դոցելու ժամն արդէն մերձեցած է, կը թողու յաջորդ նիստին :

Որոշուեցաւ յաջորդ նիստն 13 օրէն դուժարել ըստ հետեւեալ Օրակարգին .

1. Ամբողջացում Քաղաքական ժողովոյ .
2. Հարցում Իփէկճեան էֆ. ի առ նախորդ կըրօնական ժողով .
3. Ընդունելութիւն հին ատենադրութեանց .
4. Փոփոխեալ տրամադրութիւնք Ազգային Սահմանադրութեան :

Ատենը դոցուելու միջոցին Դիւանը կըրորդ բացակայութիւնը լրացնող երեսփոխանաց ցուցակը ներկայեց, որ ահաւասիկ .

- Յակոբ պէյ Պալեան
- Մկրտիչ էֆ. Քիւրքճիխանլեան
- Սարգիս « Զրաճեան
- Գէորգ « Մկրտիչեան

եւ յաւելցուց թէ Պալեան Յակոբ պէյ ընտրութեան օրէն եւրոպա դանուելուն եւ երկարատեն չկրնալ վերադառնալուն համար հրաժարեալ նկատելի է :

Ժողովն ըստ օրինի հրաժարեալ հրատարակեց յիշեալ չորս երեսփոխանները :

Ժամը 10-ին քառորդ մնացած՝ ատենը դոցուեցաւ :

(Ըստ հասանումիս Ժողովն Գիւանը այն պէն-գրութեան կը կցէ ժողովն կանոնադրութիւնը)

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ի Ր ՈՒ Թ Ի Ի Ն  
Ա Զ Գ Ա Յ Ի Ն Ժ Ո Ղ Ո Վ Ի Ն

ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ

Բացում Ժողովին, և վաւերացում ընտրութեանց .

307. Ան. — Կ. Պօլսի Պատրիարք Բարձրաշքնոր՝ Սրբազանը՝ իրբեւ Նախագահ՝ զԱզգային ժողովը կը բանայ մայիսի առաջին եօթնեկին մէջ :

Բացման ճառով ընդհանուր տեսութիւն մը կու տայ ազգային դործոց նախընթաց տարւոյն վիճակին վրայ, եւ ժողովին ուշադրութեանը կը յանձնարարէ ատենական նոր շրջանն ըղբաղելու գլխաւոր խնդիրները :

Ատենական շրջանը մարտի վերջերը կը լմննայ, յորում ժողովը կը փակվի, յորում սահմանադրապէս լուծանելի երեսփոխանաց պաշտօնը կ'աւարտի, եթէ ժողովին մասնակի վերանորոգումը այն տարւոյն հանդիպի :

Նոր ընտրութիւնք՝ ժամանակին սկսելով ապրիլին կ'աւարտին :

Վարչութեան տարեկան համարատուութեան ժամակէտը կը հասնի :

Իրբեւ նախապատրաստութիւն՝ յոր Նախագահ Սրբազանը կը հոգայ, բացումէն առաջ պատրաստ պէտք է ըլլան

— Ընտրութեանց տեղեկագիրները, որ առաջին նիստին օրակարգն է զիւանին կազմութեան հետ .

Բ՝ Վարչութեան իւրաքանչիւր ճիւղին տարեկան համարատուութիւնը, որ առաջին վիճաբանելի խնդիրն է զիւանաց կազմութեանէն ետքը :

307. Բ. — Բացման ճառէն անմիջապէս ետքը՝ Նախագահ Սրբազանը կը հրաւիրէ երեսփոխանաց երկացողոյններէն մէկը առժամայ ատենապետ բաղմիլ, եւ կրտսերագոյն մը՝ ատենադպրութեան պաշտօն վարել :

Այս առժամայ զիւանին դործն է՝ վաւերացում ընտրութեանց, եւ կազմութիւն Մայր Դիւանին :

307. Գ. — Ժողովը չը վաւերացնէր ՚զայն ընտրութիւնը որ ընտրեալին յանձնառութիւնն ապահովող ծանօթագիր չ'ունի ընտրող ժողովին կողմէն, եւ ընտրելիութեան պայմաններն ա-

պահովող ծանօթագիր՝ Պատրիարք Սրբազանին կողմէն :

Ընտրութեանց տեղեկագիրները՝ որ Նախագահ Սրբազանին ուղղեալ են ընտրող ժողովներէն, ապահովութեան ծանօթագրով մը Եւր Սրբազանութեան կողմէն զիւանին կ'աւանդվին :

Ատենադպիրը կ'ընթեռնու ՚զանոնք, եւ զիւտօղութիւններ՝ եթէ կան՝ կ'ըլլան . ժողովը կ'արտասանէ իր վճիռը ընտրութեանց օրինաւորութեանը վրայ, եւ Ատենապետը երեսփոխան կը հրուչակէ այն անունները որոց իշխանութիւնը վաւերական դատված է :

Նախագահ Սրբազանը կը հրաւիրէ անմիջապէս նորընտիր երեսփոխանները՝ եթէ ունկրնդբաց մէջ են, դալ տեղ աւանուլ եւ բաղմիլ : Եթէ չ'են, յատուկ նամակաւ կը ծանուցնէ իրենց ընտրութեան վաւերացումը եւ կը հրաւիրէ ՚զանոնք յաջորդ նիստին ժողովին աշխատութեանց մասնակցիլ :

Օրինաւորութեան թերութիւն ունեցող տեղեկագիրը Նախաձեռնութեան զիւանին կը յղվի, եւ վաւերացումն ուրիշ նիստի կը մնայ :

Անմիջապէս կը ձեռնարկվի Մ. Դիւանին կազմութեանը, եթէ ժամանակը ներէ եւ ժողովն ուզէ . եթէ ոչ՝ ութ օրէն վերստին կը դուժարվի նիստը ի ներկայութեան նորընտիր անգամոց, օրակարգ ունելով 1՝ Կազմութիւն Մ. Դիւանին, 2՝ Կազմութիւն Նախաքննիչ զիւանաց :

Բ. ԳԼՈՒԽ

Կազմութիւն Մայր զիւանին

307. Ա. — Ժողովին զիւանը՝ որ եւ Մայր զիւան կ'ըսվի միւս զիւաններուն նկատմամբ, կը բաղկանայ մէկ ատենապետէ, երկու դերատենապետէ (1) եւ երեք ատենադպրէ . որոնք մէկ շրջանի համար կ'ընտրվին եւ վերընտրելի են :

307. Բ. — Ատենապետը առանձին կ'ընտրվի բացարձակ առաւելութեամբ : Իսկ երկու դերատենապետները միասին կ'ընտրվին բաղմանուն քուէով (յօդ. 47), նոյնպէս եւ ատենադպրը :

(1) Հրահանգ. — Դերատենապետները Դիւանը չ'են բաղմիլ այլ միայն բացակայութեան ատեն Ատենապետին փոխանորդելու համար :

Ասոնք իրենց ըստացած քրէից առաւելութեան կարգովը իրրեւ առաջին, երկրորդ, եւլ կը նկատվին :

Երկու դարձ քրէարկութենէ ետքը, եւ տատանում պատահած ատեն, համեմատական առաւելութիւնը կը բաւէ :

Քրէից հաւասարութիւն պատահած ատեն՝ ատենապետաց երիցագոյնն ընտրեալ է, եւ ատենադպրաց կրտսերագոյնը, եթէ վիճակ չը պահանջվի դոնէ երկու ձայնով, ժողովը կ'որոշէ ձեռամբարձով, առանց վէճի :

Երբ գիւանին մէջ հրաժարում պատահի (յօդ. 111), եթէ հրաժարողը ատենապետն է, նոր ընտրութիւն կ'ըլլայ. բայց եթէ երկրորդն է հրաժարողը, երրորդը երկրորդ կ'ըլլայ եւ նոր երրորդ մը կ'ընտրովի : Իսկ եթէ ատենադպրաներէն մէկը հրաժարի, հետեւորդն անոր տեղ կ'անցնի եւ երրորդ ատենադպիր մը կ'ընտրովի :

307. 6.— Ատենագրութեանց արձանագիրքէն զատ Գիւանն ունի երեք տօմար՝ խնդրոց կարգի տօմար, խօսից կարգի տօմար, ներկայութեան տօմար. զորոնք առաջին ատենադրպիրը կը բաշխէ իւր պաշտօնակցաց, հսկելով անոնց վրայ իրրեւ ընդհանուր ատենադպիր :

Մայր գիւանին կազմութենէն ետքը եթէ ժամանակը չը ներէ՝ նիստը կը վերնայ, ութ օրէն վերըստին դումարվելու պայմանաւ՝ Նախաքննիչ գիւանաց կազմութիւնն ընելու համար, որ իրրեւ ատենական խնդիր՝ միշտ ստիպողական է ժողովին համար, որ չը կրնար գործի սկըսիլ իւր գիւանաց կազմութենէն առաջ :

Գ. ԳԼԱԻԽ

Կազմութիւն Նախաքննիչ գիւանաց

307. 7.— Ժողովին մէկ մասը գիւաններու կը բաժնվի, որոնք տարիէ տարի կը նորոգվին :

Ժողովն իր աշխատութեանց գիւրութեան եւ արդիւնաւորութեանը համար՝ իր գիւաններուն յատուկ ձեռնհասութեանը կը յանձնէ վիճաբանելի խնդրոց նախապատրաստական քննութիւնը :

Այս գիւանները՝ Ձեռնհաս կամ Նախաքննիչ գիւաններ ալ կը կոչվին, որք են

• Ձեռնհասութեան գիւան՝ կրօնական կամ խառն նիւթոց քննութեանը յատկացեալ :

բ. Դաստիարակութեան գիւան՝ կրթական կամ դպրոցական խնդրոց քննութեանը յատկացեալ :

գ. Կարուածոց գիւան՝ վանքի, հիւանդանոցի, կտակաց եւ ո՛ր էլ կալուածական խնդրոց քննութեանը յատկացեալ :

դ. Համարակալութեան գիւան՝ տարեկան պիւճէին, հանդանակութեան, եւ ո՛ր եւ է ելմըտական խնդրոց քննութեանը յատկացեալ :

ե. Յարաբերութեանց գիւան՝ թաղական եւ գաւառական խնդրոց եւ աղերսագրոց քննութեանը յատկացեալ :

զ. Իրաւասութեան գիւան՝ հովական աթոռոց վերաբերեալ եւ վարչական խնդրոց քննութեանը յատկացեալ :

է. Նախաձեռնութեան գիւան՝ օրինական եւ կանոնական խնդրոց քննութեանը յատկացեալ :

ը. Խմբագրութեան գիւան՝ օրինական եւ կանոնական ծրագրաց կամ յօդուածոց գրական վերաքննութեանը յատկացեալ :

Բաց ասոնցմէ՝ ժողովն ըստ հարկին եւ առժամայ կերպով յատուկ մասնաժողովներ կը կարգէ՝ սովորաբար 5 էն ցը 7 անդամէ. զորօրինակ՝ Սահմանադրութեան կամ Կանոնադրութեան վերաքննութեանը համար, դատաստանի մը համար, եւլ. որոց ընտրութիւնը գիւանաց ընտրութեան պէս կ'ըլլայ, իսկ պաշտօնին իրենց տեղեկագրին հետ կը վախճանի :

307. 8.— Գիւանները (ինչպէս անունը կը ցուցնէ) երեքական անդամէ կը բաղկանան, եւ անդամոց ընտրութիւնը՝ իւրաքանչիւր գիւանի համար սրբազրելի ընդհանուր ցանկի մը վրայ կ'ըլլայ, զոր Մ. Գիւանը կը ներկայէ ժողովին, եւ ժողովը՝ ցանկը սրբազրելով մէկ դարձ քրէարկութեամբ կ'ընտրէ՝ զամենը համեմատական առաւելութեամբ միայն (1) (յօդ. 47. ք. ) :

Գիւանի մը անդամը՝ ուրիշ գիւանի մ'ալ եւ մասնաժողովի մ'ալ անդամ կրնայ ըլլալ, բայց ի ժողովին ատենապետէն :

Անձիւր գիւան ինք կը կարգէ իր ատենա-

(1) Հր-հռչ.— Որքան գիւան կայ այնքան հատված կայ մէկ ցանկի վրայ գծով զտտված. իւրաքանչիւր հատված երեք անուն կը պարունակէ : Մէյմէկ օրինակ այս ցանկէն բարագոյնը կը ցրեն երեսփոխանաց, որք ամեն մէկ հատվածը զատ զատ սրբազրելով և ընդհանուր ցանկը ծաղելով քրէատուփը կը ձգեն :

պեան ու ատենադպիրը, եւ յանձնված խընդիրը քննելէն ետքը՝ կ'որոշէ՝ զիւր տեղեկագրերը :

Գիւանները կուտան եւ իրենց ատենապետաց անունները Մ. Գիւանին, որ կը հաղորդէ ժողովին՝ գիւաններու ատենապետաց ցանկը :

307. 9.— Գիւաններն իրենց աշխատութեանց կարգին մէջ ժողովին օրակարգին պէտք է հետեւին, եւ իրենց յանձնեալ քննութեան արդիւնը կարելի եղածին չափ շուտ պէտք է հասցնեն ժողովին, մանաւանդ երբ ստիպողութիւն կայ :

307. 10.— Գիւան թէ մասնաժողով տեղեկագրով մը եւ տեղեկագրերի մը միջնորդութեամբ կը ներկայեն ժողովին իրենց աշխատութեան արդիւնը, որ տեղեկագրին վերջը եզրակայութեամբ կ'ամփոփի :

307. 11.— Առաջարկութեան մը հեղինակը իրաւունք ունի ընթերակցելու խորհրդակից ձայնով՝ զայն առաջարկութիւնը քննող գիւանին կամ մասնաժողովին նիստերուն :

Եթէ քանի մը հեղինակներ են մի եւ նոյն առաջարկութեան, մէջներէն մէկը կ'որոշեն՝ զիրենք ներկայացնող :

307. 12.— Եթէ խնդրի մը վրայ տեղեկութիւն ըստանալու համար՝ հարկ ըլլայ, գիւաններն ուղղակի կը հաղորդակցին Վարչութեան գիւաններուն հետ՝ իրենց ատենապետին, ատենադպրին կամ տեղեկագրերին միջնորդութեամբ :

Նոյնպէս Բարձրաշնորհ Սրբազանը՝ ժողովալին գործի մը համար ըստ հարկին՝ գիւաններէն մէկը կամ մէկ քանին՝ կամ ատենապետները միայն ի խորհրդակցութիւն կը հրաւիրէ իր քով :

307. 13.— Գիւանաց ատենապետները կըրնան միտնալ առժամապէս եւ ատենապետաց Գիւան կազմել՝ որ եւ Համագումար Գիւան կ'ըսովի, ազգային խիստ կարեւոր կամ յարաբերական ծանր խնդրի մը նախաքննութեանը համար :

Ժողովը կ'որոշէ Համագումար գիւանի պէտքը, եւ Մ. Գիւանին Ատենապետը՝ զանի կը դումարէ իր նախագահութեամբ :

Ատենապետաց գիւանը պէտք է ըստ կանոնի Պատրիարքի ընտրութեան, ամբաստանութեան եւ հրաժարման խնդրոց նախաքննութեանը համար (տես յօդ. 47, 84, 87) :

Համագումար գիւանին վարմունքը նոյն է որ-

պէս միւս գիւաններունը. (տես վերոգրեալ յօդուածները) :

Գ. ԳԼԱԻԽ

Ատենական կամոնը

307. 14.— Ազգային ժողովը նիստ կ'ընէ քանի որ ունի օրակարգ՝ կանոնաւորապէս երկու շաբաթն անգամ մը, ուրբաթ օր, Ղալաթիոյ ժողովարանը. ժամը 6 էն մինչեւ 10. (տես բացառութիւնքը 6 եւ 55 յօդուածոց մէջ) :

Նախագահ Սրբազանը կրնայ ըստ հարկին արտաքայ կարգի ժողով դումարել ուրիշ օր մը :

Նախագահ Սրբազանին կողմէն երեսփոխանք ի ժողով կը կոչվին դոնէ երկ օր առաջ, օրագրաց միջոցով կամ յատուկ կոչնագրով, յորում յիշեալ պէտք է ըլլայ նիստին տեղը, որոշեալ ժամը եւ օրակարգը :

Երբ որ օրակարգն սպառի, նիստերը կը դադրին, բայց ժողովը բաց կը համարվի ըստ առաջին յօդուածին Կանոնադրութեան :

307. 15.— Ատենը կը բացվի ճիշդ որոշեալ ժամին, եւ նախընթաց ատենագրութիւնն ընդունելութեան կը դրվի՝ ի ներկայութեան ո՛ր եւ է թիւի անդամոց :

Գիտօգրութիւն ունեցող բացակայ ատենաբանք իրաւունք չ'ունին ըողոքելու :

307. 16.— Ատենապետը կը բանայ եւ կը փակէ՝ զատեանը :

Իր պաշտօնն է՝ վիճաբանութիւններն ուղղել, ատենաբանից կարգով խօսք տալ, Կանոնադրութեան պահպանութեանը հսկել, եւ ժողովն ըստ կանոնի ղեկավարել :

Առաջին ատենապետին բացակայութեան ատեն՝ երկրորդին կը մնայ այս պաշտօնը, եւ երկրորդին բացակայութեանը՝ երրորդին :

307. 17.— Ատենադպրաց պաշտօնն է՝ իրարու օղնականութեամբ ատենական գրութեանց հոգ տանիլ, եւ նիստի մ'ատենագրութիւնը ամփոփի ու ըստ կարի ճիշդ խմբագրեալ՝ հետեւեալ նիստէն դոնէ 24 ժամ առաջ տրպեալ հասցնել երեսփոխանաց ամեն մէկուն :

Այս հոգը գլխաւորապէս առաջին ատենադպրին կը պատկանի, միւսներն իրենց յանձնված տօմարներով զբաղեալ (յօդ. 6) :

307. 18.— Եթէ գիւրուածով ատենագրու-



307. 41.— Յայտնի քրէէ կրնայ խնդրովիլ ամեն նիւթի համար .

Ի բայ առեալ են սա կետերը . օրակարգի որոշում, ատենագրութեանց ընդունելութիւն, ընտրութեանց վաւերացում, հրամարմանց ընդունելութիւն, առաջնութիւն կամ նախագատութիւն, յղում, օրաձգում, վիճարանութեան փակում, եւ ստիպողութեան նկատառում :

307. 42.— Յայտնի քրէէ կրնայ խնդրովիլ թէ՛ ձեռամբարձ որոշումէ առաջ եւ թէ՛ առաջին տարակուսելի փորձէն ետքը :

Կրնայ նաեւ խնդրովիլ ձեռամբարձ որոշումէն ետքը, եթէ օրինական ծրագրի կամ առաջարկութեան մը վրայ է տրվելիք վճիռը :

307. 43.— Յայտնի քրէէ խնդրու՛մը գրով պէտք է ըլլայ՝ գոնէ 5 անգամէ ստորագրեալ եւ Առննապետին ձեռքը տրված :

Թէ ըստօրագրողաց եւ թէ թեր ու դէմ քրէէարկուաց անունները պէտք է ստեղծագրութեան մէջ անցնին, նոյնպէս եւ ձեռնպահից եւ բացակայից անունները :

307. 44.— Յայտնի քրէէարկութիւնը կը կատարվի սա հետեւեալ կերպով .

Ատենապետը կը հրաւիրէ երեսփոխանները որ տեղերին նստին . Անձիւր երեսփոխան երկու քրէէթուղթ ունի ու ոց վրայ իր անունը տպեալ է . Ստիպողոյն քրէէթուղթները ընդունելութիւն կը նշանակեն, կապուտագոյնները չընդունելութիւն :

Բարապանք կը ներկայեն անձիւր երեսփոխանի՛ գոր անունէ կը կոչէ ներկայութեան տօմարակալ ատենագրողը՝ քրէէտուփ մը որոյ մէջ կը ձգէ իր քրէէթուղթը :

Անուանց ցանկը սպառելէն ետքը անմիջապէս կրկին կը կոչէ ատենագրողին այն անունները որք քրէէ է՛ն տուած : Անուանական կոչման չը պատասխանողը բացակայ կը նշանակվի, յայտնած պատճառովը, եթէ ունի (տե՛ս յօդ. 107) :

Երբոր քրէէթուղթները հաւաքված են, Ատենապետը փակեալ կը յայտարարէ ըզքրէէարկութիւնը : Քրէէտուփներն անմիջապէս բեմին վրայ կը բերվին . Ատենագրողը քրէէհամարը կ'ընեն, եւ Ատենապետը կը հոչակէ՝ 'զարդիւնը . այսինքն՝ քանի քրէէի վրայ, քանի քրէէի դէմ, քանի քրէէով ընդունվիլ կամ չընդունվիլը :

Եթէ 5 անգամ խնդրեն թէ քրէէարկութիւնը բեմին վրայ ըլլայ, ժողովը կ'որոշէ ձեռամբարձով առանց վէճի :

307. 45.— Այն ամեն պարագայից մէջ ուր յայտնի քրէէ կրնայ կամ պարտ է ընդունվիլ, եթէ 5 անգամ գաղտնի քրէէ խնդրեն, պէտք է որ գաղտնի ըլլայ :

Գաղտնի քրէէն ալ յայտնի քրէէին պէս կը խնդրվի (տե՛ս յօդ. 45) :

Խնդրանքն ըստօրագրողաց անունները ատենագրութեան մէջ կ'անցնին, նոյնպէս եւ ձեռնպահից ու բացակայից անունները :

307. 46.— Գաղտնի քրէէարկութիւնը կը կատարվի սա հետեւեալ կերպով .

Անձիւր երեսփոխան կ'առնէ երկու գնտակ, մէկը ձերմակ՝ որ ընդունելութիւն կամ ոչ՝ կը նշանակէ, միւսը սեւ՝ որ չընդունելութիւն կամ ոչ կը նշանակէ : Անուանական կոչման կարգով անձիւր ոք կը ներկայանայ, բեմին վրայ գրված սափորի մը մէջ կը ձգէ իր քրէէն նշանակուող գնտակը . իսկ միւս գնտակը որ նշանակութիւն է՛ ունի կը տանի կը ձգէ ուրիշ սափորի մը մէջ՝ որ ատենագրողաց դիւանին վրայ զրբված է :

Քրէէնին տալէն ետքը՝ ամեն մարդ կ'անցնի իր տեղը կը նստի :

Ատենագրողը կողովի մը մէջ կը պարպեն բեմին վրայի սափորը . ամենուն ցուցնելու կերպով կը համբեն գնտակները, եւ ձերմակները սեւերէն կը դատեն (1) :

Գոնէ երկու ատենագրողի կը հաստատեն այս համարանքին արդիւնը, 'զոր Ատենապետը կը հոչակէ :

307. 47.— Ժողովին մէջ ընտրութիւնը գաղտնի քրէէով կ'ըլլան, եւ քրէէհամարը չորս քննիչներու ձեռք կը կատարվի որոնք վիճակով կը հանվին :

• Միանուն է քրէէն՝ երբոր մէկ քրէէով մէկ անուն կ'ուզվի ընտրել, եւ քրէէթուղթը մէկ անուն պարունակելու է :

Բազմանուն է քրէէն՝ երբոր մէկ քրէէով մէկէն աւելի անուն կ'ուզվի ընտրել, եւ քրէէթուղթը այնքան անուն պարունակելու է որքան որ կ'ուզվի ընտրել :

Բազմանուն քրէէթուղթները՝ եթէ ուզ-

(1) Հրահանգ .— Գնտակի պակասութեան տեսն, առհարկի մարթ է նաեւ թուղթի կտորներով կատարել այս գործողութիւնը, անձիւր անգամ՝ դրացոյն չը ցուցընելու ըզքրէէարկութեամբ եւ ընթեռնելի կերպով իր ոչնէ կամ ոչնէ թուղթի կտորի մը վրայ գրելով : Այն ատեն երկու սափորի ալ հարկ չը կայ :

ված թիւէն աւելի անուն պարունակեն՝ ընդունելի են . բայց միայն՝ առջիններէն ուզված թիւը կ'առնվի, ետքի աւելորդը չը համրվիր :

Բ. Ժողովին մէջ ընտրութիւնները՝ Մ. Գիււանին անդամներէն զատ որ անցանկ կ'ընտրվին թէ միանուն եւ թէ բազմանուն քրէէով (յօդ. 6), ներկայեալ ցանկի մը վրայ կ'ըլլան, որ կամ զէրէն է կամ ոչնէրէն :

Գ. Սրբագրելի ցանկը՝ այնքան անուն կը պարունակէ որքան որ ընտրել կ'ուզվի, որոյ մէջ քրէէարկութիւնը չ'ուզած անուններն կ'աւրեն տեղը ուղածնին կը գրեն :

Մէկ դարձ քրէէարկութեամբ համեմատական առաւելութիւնը միայն կը բաւէ :

Դ. Զեղչելի ցանկը՝ եթէ մէկ անուն ընտրել կ'ուզվի մէջէն՝ գոնէ եռապատիկ անուն պարունակելու է . եթէ մէկէն աւելի կ'ուզվի, ցանկը երկպատիկ անուամբ կը բաւէ : Նախ այս ցանկը քրէէի կը գրվի . եւ յետոյ քրէէարկութիւնը կը գեղչեն այս ցանկէն աւրելով չ'ուզած անուններն, բայց տեղը անուն չ'են կրնար դնել :

Երկու դարձ քրէէարկութիւնը կը բաւէ՝ համեմատական առաւելութիւնը կը բաւէ :

Զեղչելի ցանկը պէտք է կոչնագրին հետ հաղորդեալ ըլլայ երեսփոխանաց, որպէս զի ժամանակ ունենան ընտրելեաց վրայ պէտք եղած ծանօթութիւններն ըստանալու :

Ե. Գիււանաց եւ մասնաժողովոց ընտրութիւնը սրբագրելի ցանկի վրայ կ'ըլլայ 'զոր Մ. Գիււանը կը ներկայէ եւ ժողովը կը սրբագրէ :

Զ. Վարչութեան անդամոց ընտրութիւնը զեղչելի ցանկի վրայ կ'ըլլայ, 'զոր Համագումար դիւանը Պատրիարքին հետ խորհրդակցութեամբ կը պատրաստէ եւ ժողովը կը զեղչէ (1) :

Է. Պատրիարքի ընտրութիւնը բացարձակ առաւելութեամբ կ'ըլլայ՝ զեղչելի ցանկի վրայ, 'զոր Վարչութիւնը կը ներկայէ՝ Սահմանագրութեան պահանջած կրօնական ու քաղաքական պայմանաց սպահովութեան ծանօթագրով մը, եւ միանգամայն ընտրելեաց անցեալն ու արժանիքը պատճառաբանող համառօտ տեղեկագրով մը, 'զոր ատենապետաց դիւանը կը նախաքննէ (15) :

Այս դիւանն իր դիտողութեամբ կ'եղբակայէ իր կարծիքը՝ կամ անսրբագրի ընդունելութեան

(1) Կրօնականին համար տե՛ս Սահմանագրութեան մէջ իր յօդուածը :

ցանկին, կամ սոսկ փոփոխութեամբ արժանեաց կարգին, եւ կամ սրբագրութեան 'զոր կ'առաջարկէ : Ժողովն այդ առաջարկեալ փոփոխութիւն կամ սրբագրութիւնը կ'ընդունի կամ կը մերժէ՝ ձեռամբարձով առանց վէճի, եւ յետոյ ըստ այնմ կը զեղչէ ցանկն իր քրէէով :

Քրէէից հաւասարութիւն պատահած ատեն՝ երկրպագոյնն ընտրեալ է, եթէ վիճակ չը պահանջվի գոնէ երկրորդօղ ձայնով . ժողովը կ'որոշէ ձեռամբարձով առանց վէճի միթէ վիճակը կ'ընդունի :

Սոյն կանոնով կը քննէ ժողովը պատրիարքական տեղապահութեան ընտրելեաց ցանկը, եթէ իրեն դայ :

Սոյն ճամբէն կ'անցնի ժողովին մէջ եւ կաթուղիկոսական ընտրելեաց ցանկը՝ որ կողմէ որ դայ, եւ սոյն օրինակ կը մասնակցի Ազգային ժողովն այդ ընտրութեան :

307. 48.— Քրէէի մասնակցողաց բացարձակ առաւելութեամբ կը գոյանայ ժողովին որոշումը :

Բարձրաչնոր՝ Նախագահը քրէէի մասնակցելու պարտաւորեալ է՛, եւ անուանական կոչում չ'ըլլար իրեն համար :

Ամեն քրէէարկութեանց վերջը՝ փակեալ յայտարարելէն առաջ՝ Ատենապետը ժողովին կողմէն կը հարցնէ Պատրիարք Սրբագանին միթէ ունի քրէէ : Իսկ երբոր քրէէ համարի արդիւնը թեր ու դէմ քրէէից հաւասարութիւն բերէ, եթէ Պատրիարք Սրբագանը քրէէ տուած է, այն քրէէին կողմը կը հակի որոշումը . եթէ չ'է տուած, յայնժամ Ատենապետը 'յանուն ժողովին կը խնդրէ Նորին Սրբազնութեան քրէէն որ կ'որոշէ 'զորոշումը :

Պատրիարք Սրբագանին բացակայութեան ատեն՝ Ատենապետին կը մնայ այս իրաւունքը :

307. 49.— Ժողովին որոշմանց վաւերականութեամբ համար՝ երեսփոխանաց մեծամասնութեան ներկայութիւնը հարկաւոր է, կամ պակասութեան ատեն՝ անոր որոշող ձայնից միաբանութիւնը :

Երկու ատիճան մեծամասնութիւն կ'ընդունվի, օրինակէն է՝ 1-1-1 :

Օրինական մեծամասնութիւնն է՝ ամբողջ երեսփոխանութեան Սահմանագրութեամբ որոշված թիւին (1) կէսէն մէկ աւելին ( որ այսօր 71 է ) :

(1) Մասնէ .— Երեսփոխանաց այս ամբողջ թիւը գրե-





Է. ԳԼՈՒԽ

Առաջարկութիւնք

307. 61.— Երեսփոխանի մ'ըրած ո՛ր եւ է առաջարկութիւն՝ օրինական թէ պարզ՝ գրաւոր պէտք է ըլլայ : Ատենապետին կը արվի որ ժողովին հաղորդելէն ետքը՝ նոյն խնդրին ձեռնդրեալ գիւանին նախաքննութեանը կը յանձնէ (յօդ. 9 եւ 10) :

Այս գիւանը հակիրճ տեղեկագիր մը կը բերէ, որոյ եղբակցութիւնն է կամ պարզապէս մերժում, կա՛մ օրաձգում, կա՛մ նկատառում :

Սակայն, եթէ գիտնայ այս գիւանը թէ ուրիշ գիւան մը արդէն այնպիսի խնդրով մ'ըզբազեալ է որ կապակցութիւն ունի այդ առաջարկութեան հետ, անդէն ու բերանացի կը խնդրէ ժողովէն որ այն գիւանին յղվի առաջարկութիւնը :

307. 62.— Եթէ ձեռնհաս գիւանը պարզապէս մերժման կամ օրաձգման եղբակայէ, ժողովը կ'անցնի իր օրակարգին : Եթէ նկատառման եղբակայէ, նախ 'զատի կ'որոշէ ժողովը : Եթէ նկատառումն ընդունի, կ'անցնէ 'զանի խնդրոց աստիճան մէջ ուր կ'ըստատէ իր օրակարգը : Եւ ելք կու տայ առաջարկութեան՝ պարզ որոշման եղանակաւ, եթէ պարզ է առաջարկութիւնը :

307. 63.— Առաջարկութեան մը հեղինակը երբ վէճն անգամ բացված ըլլայ, կրնայ 'զանի միշտ ետ առնուլ : Բայց եթէ ուրիշ երեսփոխան մը 'զանի բռնէ, վիճաբանութիւնը կը շարունակվի :

307. 64.— Ժողովէն մերժեալ կամ օրաձգեալ առաջարկութիւնք չեն կրնար մէյ մ'ալ ներկայանալ երեք նիստէ առաջ եթէ նկատառութեան առված են. վեց նիստէ առաջ՝ եթէ առաջին որոշմամբ մերժեալ են :

307. 65.— Վարչութեան կողմէն ներկայեալ օրինական ծրագիր կամ առաջարկութիւն՝ անգամոց մէկուն ձեռօք Մ. Գիւանին վրայ կ'աւանդվի յետ ընթերցման, եթէ ընթերցում ըլլայ :

Այս ծրագիրները պատճառաբանեալ են, եւ եթէ կարելի է՝ տպեալ եւ երեսփոխանաց ցրուեալ, որպէս են նաեւ յատուկ մասնաժողովի մը աւանդեալ սահմանադրական կամ կանոնադրական ծրագիրք կամ յօդուածք :

Ատենապետը՝ սոյն խնդրոց յատկացեալ՝ բե-

մական նախաձեռնութեան գիւանին կը յղէ 'զօրինական ծրագիրը կամ առաջարկութիւնը, խնդրին ուսումնասիրելու եւ նախապատրաստական քննութիւնն ընելու համար (յօդ. 9 եւ 10) :

Նախաձեռնութեան գիւանին տեղեկագիրը Մ. Գիւանին վրայ կ'աւանդվի յետ ընթերցման, եթէ ընթերցում ըլլայ : Ատենապետը կ'առաջարկէ եւ ժողովը կ'որոշէ վիճաբանութեան օրը :

307. 66.— Ո՛չ մէկ ծրագիր օրինաց՝ բաց ըստիպող գէպերէ՝ չը գրվիր վերջնական քուէի, եթէ երեք որոշումէ չ'անցնի՝ իրարմէ գոնէ մէկ շաբաթ միջոցով :

Առաջին որոշումը յատկապէս ծրագրին ընդհանրութեանը վրայ կ'ըլլայ, ժողովին կը հարցվի միթէ կ'ուղէ՞ երկրորդ որոշման անցնիլ :

Երկրորդ որոշումը կ'ըլլայ ամեն մէկ յօդուած քուէի գնելով, նաեւ անոնց վերաբերեալ ըստիպութիւնները, եթէ կան : Ժողովը կ'որոշէ միթէ կ'ուղէ՞ երրորդ որոշման անցնիլ :

Երրորդ որոշումէն ետքը՝ որ ծրագրին բովանդակութեանը եւ մասնաւոր տրամադրութեանց վրայ կ'ըլլայ, վերջնական քուէի կը ձեռնարկվի, որն որ կը կնքէ 'զորոշումը :

Ժողովը կրնայ՝ այս վերջնական քուէէն առաջ՝ Խմբագրութեան գիւանին յղել ծրագիրը. որպէս զի գլխոց եւ յօդուածոց դասակարգութեանը նայի եւ օրէնսդրական ոճին ու յատկաբանութեանց ուշադրութեամբ վերաքննութիւնն ընէ : Այս յղումն իրաւունք է եթէ ձեռնհաս գիւանը խնդրէ :

Գրական վերաքննութեանէն ետքը մէյ մ'ալ կը կարգացվի ժողովին, եւ բացված վիճաբանութիւնը մի միայն խմբագրութեան վրայ կրնայ ըլլալ :

307. 67.— Բարեփոխութիւնք խմբագրեալ կը արվին Ատենապետին :

Ժողովը քուէ չը տար ո՛չ մէկ բարեփոխութեան վրայ եթէ՝ բացատրվելէն ետքը՝ չ'ունենայ երկրորդ մը :

307. 68.— Երկրորդ որոշման միջոցին առաջարկված բարեփոխութիւնք՝ նախաքննիչ գիւանին կամ մասնաժողովին յղել իրաւունք է եթէ տեղեկարբեր խնդրէ :

Երկրորդ որոշման փակումէն ետքը ներկայեալ նոր բարեփոխութիւն կամ յաւելուածական յօդուած՝ երրորդ որոշման բացումէն ա-

ռաջ հաղորդված պէտք է ըլլայ նախաքննիչ գիւանին կամ մասնաժողովին :

307. 69.— Ետեակ քուէարկութեամբ բարդ որոշման անօրէնութիւնը պիւճէի խնդրոց եւ տեղական օրինաց համար չ'է. ասոնք միակ քուէարկութեամբ եւ պարզ որոշման եղանակաւ կը անօրինվին : Այլ սահմանադրական այն կետերուն համար է որ ընդհանուր աղգին մէջ իբրեւ օրէնք պիտ' իշխեն. ինչպէս ընտրական օրէնք, հանդանակութեան օրէնք, դատարարակութեան օրէնք, իրաւանց ու պարտեաց արդար սկզբունքէն բխեալ այն տրամադրութիւնք՝ որ Վայսերական ընդհանուր օրինաց համաձայն՝ սղղային Վարչութեան ընթանալու շաւիղը կը գծեն եւ անհատից յարգն ու պատկառանքը կը պահանջեն :

307. 70.— Այն օրինաց համար՝ որք ըստիպողութեան պատճառով պարզ որոշման եղանակին ենթարկեալ են (յօդ. 59), Բարձրաշնորհ՝ իբրեւ գործադիր իշխանութեան Պետ՝ իրաւունք ունի երկրորդ որոշում մ'ալ խնդրելու 'զոր պատճառաբանեալ ղիտօղութեամբ կը յայտնէ ժողովին :

307. 71.— Եթէ երեք որոշմանց մէկուն մէջ մերժվի օրինական ծրագիր մը, երեք նիստէ առաջ չը կրնար դարձեալ երեւիլ ժողովին օրակարգին մէջ :

307. 72.— Ժողովին որոշմանց արդիւնքը Ատենապետը կը հուշակէ սան բառերով

« Առջայն ժողովն ընդունեց », կամ « Առջայն ժողովն չ'ընդունեց » :

307. 73.— Աղղային ժողովին վերջնական վճիռը նոյն ժամէն գործադրելի է :

Ատենապետը՝ ժողովին կա՛քն առնելէն ետքը՝ յանուն ժողովին ըստօրագրելով կը հրամանէ վճռագիրը, նիստին օրէն թվականեալ, 'զոր եւ ատենադպիր մը կ'ըստօրագրէ :

Վճռագիրը Ատենապետին ձեռօք Բարձրաշնորհ Սրբազանին կը արվի, 'զոր ինքն ալ ըստօրագրելով՝ նախադահական հրամանմամբ գործադրութիւնը կ'ապահովէ :

Օրինակը Պատրիարքարանի գիւանին մէջ առձանագրվելով օրինաց գիրքին մէջ, վճռագիրը կը պահվի աղղային ժողովին թանգարանին մէջ :

Ասկէ ութ օրէն՝ Բարձրաշնորհ Սրբազանը պատրիարքական կճեղակաւ կը ծանուցնէ Առաջնորդաց 'զաղղային որոշումը, ի հրահանգ ժողովոց եւ խորհրոց :

307. 74.— Եթէ հաստատված օրինաց մէջ սահմանադրական այնպիսի կետեր կան, որ Բ. Գրան վաւերացմանը կը կարօտին, այնպիսեաց համար՝ Բարձրաշնորհ Սրբազանը՝ կա՛մ պատասխանատուութիւնը յանձն կ'առնու իբրեւ միջնորդ յարաբերութեանց Աղղին եւ Տէրութեան, եւ գործադրութիւնը կը հրամանէ պատրիարքական իշխանութեամբ, սպասելով 'զայդ վաւերացումը. կա՛մ՝ բացառութիւն կը խնդրէ ժողովէն, փութացնել խօստանալով 'զայդ վաւերացումը :

Ո՛րն եւ ըլլայ իր որոշումը՝ Բարձրաշնորհը կը յայտնէ 'զանի ժողովին գո՛նէ յաջորդ նիստին մէջ :

307. 75.— Ժողովն իր որոշումէն չը կրնար դառնալ կամ 'զանի փոփոխել, եթէ որոշեալ խնդրին հեղինակին կողմէն, Վարչութեան կամ Պատրիարքին կողմէն՝ գործադրութեան անտեղութիւն պատճառելով ըստիպողութիւն չը խնդրվի, որոշումէն գո՛նէ երեք ամիս ետքը. (տե՛ս ըստիպողութեան յօդուածները) :

Եթէ ըստիպողութիւնը մերժվի, արդէն որոշեալ խնդիրը մէյ մ'ալ չը կրնար ներկայվիլ նոյն ատենական շրջանին մէջ :

Է. ԳԼՈՒԽ

Բեմական յարաբերութիւնք ժողովին

307. 76.— Ժողովին ուղղակի եւ ներքին յարաբերութիւնքը իւր Գործադիր իշխանութեան եւ իւր Վարչութեան հետ են, որոյ անգամք՝ իրենց վերապահեալ նստարանին վրայ բազմած՝ ժողովին մէջ ձայն ունին, բայց ո՛չ քուէ եթէ երեսփոխան չ'են : Նոյնպէս եւ իրենց համարատուութեան խնդրին մէջ ձայն ունին բայց քուէ ո՛չ՝ թէեւ երեսփոխան :

Ժողովին գիւանը աւանց թուղթի գործ ո՛չ կ'ընդունի Վարչութեանէն, ո՛չ կը յղէ Վարչութեան (1) :

(1) Հրահանգ.— Վարչութիւնը չը կրնար եւ չ'ունի իրաւասութիւն խնդրի յղել ժողովին ի քննութիւն ու տարտամ կերպով կարծիք հայցնել, զի քննութիւնը տեղեկագիր կը պահանջէ, եւ ժողովը տեղեկութիւն տալու տեղ չ'ունի : Իրմէ վեր մարմին չը կայ պաշտօնական, իր քննութեանց ու վէճերուն նպատակը՝ մ'ըլլայ վճռի մը հասնիլ է : Իրեն եկած թուղթերը՝ իր գիւանին վրայ աւանդեալ վճիռ կ'ըստատեն եւ ո՛չ տեղեկագիր : Վարչութեան ընկերքը խնդրանք մըն է 'կամ՝ առա-

307. 77.— Վարչութեան անդամք՝ անձիւր իր մասին մէջ առանձին իրրեւ պաշտօնեայ ժողովին՝ պատասխանատու են անոր, եւ Գործադիր իշխանութեան Պետը՝ ընդհանուր պատասխանատու, ըստ Սահմանադրութեան:

Այս պատասխանատուութենէն ընդհանուր կերպով կը զերծվի Սահմանադրութեան պատուիրած տարեկան համարատուութեամբ:

Սահմանադրութեան պատուիրած համարատուութիւնը՝ չ'իմանար եղած անցած զէջ մը մասնաւոր գործողութեանց ցանկը, այլ տեւական եւ ընդհանուր վերակերպութիւնները, եղծմանց ու անկանոնութեանց առջեւն առնելու համար նոր հաստատված օրէնքն ու կանոնները, ազգային գործոց անձիւր ճիւղին իր մասին մէջ ինչ քայլ առած յառաջագէտ եւ որ աստիճան բարգաւաճեալ ըլլալը. վերջապէս չ'իմանար պաշտօնէին պաշտօն վարած ըլլալը գիտնալ, այլ այն պաշտօնին պարտականութիւնը կատարած կամ որ աստիճան կատարել կրցածը կ'սպասէ իմանալ: Քանզի պաշտօն եւ պարտականութիւն մի եւ նոյն բան չ'իմանար Սահմանադրութիւնը:

Համարատուութեամբ հասկցածն այն է Սահմանադրութեան, ինչ որ Վարչութեան իւրաքանչիւր մասին համար՝ ո՛չ իրրեւ պաշտօն այլ իրրեւ պարտականութիւն գծած է իր յօդուածոց մէջ, ժամանակին համար պահանջելու նախատեսութեամբ:

Սոյն աչօք կը քննեն դիւանները, սոյն աչօք կը դատէ ժողովն ըզՎարչութեան համարատուութիւնքը:

Եթէ ժամանակին չ'աւանդվին այդ համարատուութիւնք Մ. Գիւանին վրայ, հանդերձ ազգային ելուժող տարեկան պիւճէով, պատասխանատու կը մնան Վարչութեան անդամք եւ զլիսաւորապէս Գործադիր իշխանութեան պետը, որում այս մասին հարցում կ'ուղվի Գիւանէն (յօդ. 1):

307. 78.— Վարչութեան իւրաքանչիւր մասին տարեկան համարատուութիւնքը՝ ատենական չ'ըջանին երկրորդ նիստին մէջ՝ չ'տպեալ

չարկութիւն, որոյ համար ըստիպողութիւն կրնայ խնդրել: Ստորնագրոյ դիւանէ մը պաշտօնական թուղթ չ'ըջը վեր բարձրագոյնին՝ այլ կը մատուցվի. ինչպէս բարձրագոյնէն չ'ը մատուցվի ստորնագրոյնին՝ այլ կը յղվի:

կ'աւանդվին ժողովին դիւանին վրայ (յօդ. 1 եւ 6):

Ատենապետը զանոնք դիւաններուն կը յղէ իրրեւ ստիպող խնդիր (յօդ. 9, 10, 11) ժողովին կարծիքն առնելէն ետքը ձեռամբարձով առանց վէճի:

Գիւաններէն տեղեկագիր քանի որ հասնի, տեղեկաբերը կ'ընթեանու եւ կ'աւանդէ Մ. Գիւանին: Ատենապետը կ'առաջարկէ եւ ժողովը կ'որոշէ իւրաքանչիւրին վիճաբանութեան օրը:

307. 79.— Համարատուութեանց քննութեան արդեամբ ժողովը կամ կը գովէ կամ կը պարտաւէ Վարչութեան ընթացքը, եւ իր դատավճիռը գաղանի քրէով կը յայտնէ:

Համարատուութեան շնորհունելութիւնը՝ վրատահութիւն կ'ենթադրէ ժողովին կողմէն համարատու ճիւղին վրայ, որ պարտաւորեալ կը գանվի հրաժարելու:

307. 80.— Վարչութեան անդամոց հրաժարականը՝ կամ ուղղակի ժողովին կը տրվի կամ Պատրիարք Սրբազանին, որ՝ եթէ ընդունի՝ կը հաղորդէ 'զանի շնորհիւն, որ կը հաստատէ 'զայն ընդունելութիւնը եւ նոր ընտրելեաց ցանկը կը խնդրէ (տե՛ս յօդ. 47): — Ժողովին տրված հրաժարականը՝ եթէ պատճառաբանեալ է, ժողովն իրաւասութեան դիւանին եզրակաշութեանը վրայ՝ ձեռամբարձով առանց վէճի՝ կամ կ'ընդունի կամ Գործադիր իշխանութեան կը յղէ ի տնօրէնութիւն:

307. 81.— Ո՛ր եւ է պարագայի մէջ՝ երբ ժողովին կողմէն անվատահութեան ցոյց կամ կասկած նշմարէ, Վարչութեան այս կամ այն մասը միշտ իրաւունք ունի վստահութեան քրէէ պահանջելու:

Ժողովը կ'որոշէ ձեռամբարձով առանց վէճի միթէ կը տեսնէ այդ քրէէին պէտքը: Այդ քրէէն յաջորդ նիստին կը մնայ, որոյ արդիւնքը Գործադիր իշխանութեան չ'ը պղչիր:

307. 82.— Ո՛ր ժամանակ ըլլայ՝ երեսփոխան մը կրնայ հարցապնդում ուղղել Վարչութեան ո՛ր եւ է մասին կամ Պատրիարք Սրբազանին. բայց զրաւոր պէտք է տայ իր այդ խնդրանքն Ատենապետին: — Այդ խնդրանքը կը բացատրէ համառօտիւ հարցման նիւթը եւ կ'ըսէ որո՛ւ ուղղեալ ըլլալը. Ատենապետը կ'ընթեանու 'զանի ժողովին:

Երեսփոխանէ առ երեսփոխան հարցապնդում արդիւնեալ է:

307. 83.— Վարչութեան անդամներէն անի որում անկ է պատասխանել իր կարծիքը տալէն ետքը, ժողովը կը վճռէ՝ ձեռամբարձով առանց վէճի՝ միթէ կամ ի լսել այդ հարցապնդումը, եւ կ'որոշէ օրը:

Իրաւունք է դռնիակ նստել եթէ խնդրէ հարցապնդեալ պաշտօնեայն:

Հարցապնդումը լմնալէն եւ միջադէպը գոյվելէն ետքը, ժողովը կը դառնայ իր օրակարգին:

307. 84.— Պատրիարք Սրբազանին համար անվրատահութեան քրէէ չ'առաջարկվիր, եւ ո՛չ ի թկ ինք կրնայ վստահութեան՝ քրէէ պահանջել, իր անկումը չ'ը կրնար տեղի ունենալ այլ միայն այն ճամբով որով հասած է 'իշխանութիւն (յօդ. 13, 30):

Բայց կրնայ ամբաստանվիլ՝ երեսփոխանաց կողմէն՝ Սահմանադրութեան հակառակ ընթացքի մը համար, կամ անոր գործադրութեան անհոգութեանը համար:

Երբոր կանոնաւոր (յօդ. 33) ամբաստանագիր մ'աւանդվի Մ. Գիւանին վրայ, Ատենապետը 'զանի կը հաղորդէ ժողովին եւ անոր կարծիքն առանց վէճի առնելէն ետքը կը յղէ Ատենապետաց դիւանին նախաքննութեանը:

Այս դիւանն իր տեղեկագրով կամ պարզապէս մերժման կ'եզրակայէ կամ նկատաւման: Տեղեկագրին եզրակայութեան վրայ ժողովը կ'արտասանէ իր վճիռը ձեռամբարձով առանց վէճի, եւ ըստ այնմ՝ կամ կ'անցնի իր օրակարգին եթէ մերժումն արտասանէ, կամ ելք կուտայ ամբաստանութեան եթէ նկատաւման արտասանէ:

Այս ետքի պարագային մէջ՝ յատուկ մասնաժողով մը կ'ընտրվի (յօդ. 7) ամբաստանութիւնը քննելու համար:

Երբ այս քննիչ մասնաժողովին տեղեկագիրը տպեալ եւ երեսփոխանաց ցուեալ՝ աւանդվի Գիւանին, յետ ընթերցման եթէ ընթերցումն ըլլայ, Ատենապետը՝ ժողովին կամքն առնելով առանց վէճի՝ կը յղէ 'զայս տեղեկագիրը Ատենապետաց դիւանին, ի վերաքննութիւն:

Վերաքննեալ տեղեկագրին եկած օրը՝ ժողովը կ'որոշէ վիճաբանութեան օրը, եւ կը դատէ 'զամբաստանութիւնը:

Այս դատական նիստը դռնիակ է: Ատենապետը 'զանի կը գումարէ երեսփոխանաց օրինական մեծամասնութեան ներկայութեամբը

(յօդ. 50), եւ եպիսկոպոսաց երիցագոյնին նախագահութեամբը:

Քրէէն գաղանի է, եւ ամբաստանողք քրէէ չ'ունին:

Եթէ ամբաստանութիւնն իրաւացի դատվի ժողովէն, Գիւանը կ'առաջարկէ անվստահութեան քրէէն, որ սպարտաւոր իշխանութեան անկումը կ'ենթադրէ. որոյ արդեամբ եւ յանուն ժողովին՝ Գիւանը նախագահ եպիսկոպոսին հետ կը խնդրէ Պատրիարք Սրբազանէն իր հրաժարականը, 'զոր կը պարտաւորի տալ:

Եթէ ամբաստանութիւնն անիրաւի դատվի ժողովէն, Գիւանը կ'առաջարկէ վստահութեան քրէէն որ անպարտ իշխանութեան հաստատութիւնը կ'ամրապնդէ, եւ որոյ արդեամբ՝ 'զոր Գիւանը կը հաղորդէ Պատրիարք Սրբազանին, ամբաստանողք կը պարտաւորին ներում խնդրել նորին Սրբազնութեանէն դռնբաց 'նիստի մէջ:

Սոյն օրինակ կրնայ ամբաստանվիլ եւ Վարչութեան անձիւր ճիւղ, եւ ժողովը սոյն ճամբով կը դիմէ իր դատավճռին:

307. 85.— Վարչութեան անդամք ալ կրնան ամբաստանել Պատրիարք Սրբազանը, բայց պէտք է նախ հրաժարին կամ դադրին պաշտօնէ. եւ չեն կրնար ամբաստանել երբ արդէն նորին Սրբազնութեան կողմէն վարչական փոփոխման մ'առաջարկութիւն աւանդեալ է Գիւանին:

307. 86.— Եթէ Պատրիարք Սրբազանը Վարչութեան մասնակի կամ ամբողջակի փոփոխումն առաջարկէ ժողովին, պատճառաբանեալ կ'ընէ 'զայդ առաջարկութիւնը. եւ ժողովը իրաւասութեան գիւանին եզրակայութեանը վրայ կ'ընդունի կամ կ'օրաձգէ 'զառաջարկութիւնը, ձեռամբարձով առանց վէճի:

Զօրաձգումը սա բառերով կը պատճառաբանէ. « Ժողովն զՊատրիարք Սրբազանին ուշադրութիւնը վերստին հրաւիրելով առաջարկեալ փոփոխման վրայ՝ կը յապաղէ 'զիւր հաճութիւնը »:

307. 87.— Եթէ Պատրիարք Սրբազանը զիւր հրաժարականը տայ, պատճառաբանեալ պէտք է ըլլայ այդ հրաժարագիրը. ժողովը՝ յետ ընթերցման՝ Ատենապետաց դիւանին նախաքննութեանը կը յանձնէ հրաժարագիրը, եւ այս դիւանին եզրակայութեանը վրայ՝ պատճառները քննելով՝ կ'ընդունի կամ չ'ընդունիր առաջարկեալ հրաժարումը: Եթէ չ'ընդունի, պատ-

ճառարանեալ կը հաղորդէ 'դիւր որոշումը' Պատարիարք Սրբազանին, որում միայն կը մնայ որոշել իր ընելիքը:

307. 88.— Կեղրոնական Արչութեան արտաքին յարաբերութիւններէն ծագած խնդիրները անուղղակի կու գան կ'ենեն ժողովին առեանը՝ Պատրիարք Սրբազանին միջնորդութեամբը:

Այս ճամբով եկած թուղթերը՝ կամ հրամանագիր է Բ. Կոնէն, կամ կոնդակ Աեհաշնորհ Կաթողիկոսէն, կամ խնդրագիր Գաւառական ժողովներէն եւ Առաջնորդներէն, եւ կամ աղերսագիր հասարակութեան կողմէն, Պատրիարք Սրբազանին ուղղեալ. որ ատոնց մէջէն ժողովին ներկայելիները կը հաղորդէ անոր՝ կըցելով միանգամայն Արչութեան կարծիքը նոյն խնդրին վրայ եւ պարտ ու պատշաճն իմացընելով:

Ժողովն՝ ըստ պատշաճին՝ կամ Արչութեան կը յղէ ի անօրէնութիւն, կամ իր գիւանաց նախաքննութեանէն կ'անցնէ խնդիրը, կամ մասնաժողովէ մը եւ կամ Ատենապետաց գիւանէն, եւ ատոնց տեղեկագրին վրայ կը վիճէ, կ'որոշէ իր պատասխանը եւ կը հաղորդէ իր Նախագահին առ ի տալ որում անկ է:

307. 89.— Հասարակութեան կողմէն Աղգային ժողովին մատուցուելու հանրագիր, աղերսագիր, ըստորագրեալ ըլլալու է. ըստօրագրողաց երկիրը, արհեստն ու բնակարանը նշանակեալ, կամ գոնէ չորսինը եթէ շատորեն:

Ըստօրագրութիւնը վաւերացեալ ըլլալու են տեղին Թաղական խորհուրդէն:

Եթէ այդ վաւերացումը գլացեալ է, այդ զըլացումը նշանակելու են ըստօրագրողք աղերսագրին աւարտը:

Հանրագիր թէ աղերսագիր Նախագահ Սրբազանին պէտք է ուղղի եւ անոր արվի կամ պատրիարքարանի գիւանատան՝ մէկ կամ քանի մ'անձանց ձեռքը:

Ժողովարանին բակը խոնեալ բազմութեամբ բերված աղերսագիրը ոչ Նախագահը կրնայ ընդունել ոչ Ատենապետը:

Ներսիսեանի մը արգիլեալ է միջնորդ կանգնիլ բազմութեան եւ ժողովին մէջաեղ. պարագային ծանրութեան համեմատ ենթակայ կ'ըլլայ 102 յօդուածին անօրինակ պատիժներէն մէկուն:

307. 90.— Աղերսագիրներն իրենց եկած

կարգովը կը աստարագրէ Պատրիարքարանի գիւանապետը աղերսագրոց աստարագրքին մէջ, նշանակելով աղերսագրին կարգին թիւը, ըստօրագրողին երկիրը, արհեստն ու բնակարանը, նոյնպէս եւ խիստ համառօտ կերպով աղերսին առարկան:

Տօմարագրեալ աղերսագիր Նախագահին կողմէն գիւանապետին ձեռքը կ'աւանդվի Մ. Գիւանին, եւ Ատենապետը՝ ժողովին համառօտ մը ծանուցելով նիւթը՝ կը յղէ Յարաբերութեանց գիւանին, ժողովին կարծիքն առնելէն ետքը ձեռամբարձով առանց վէճի:

Եթէ նոյն խնդրին վերաբերեալ խնդրով մ'ըզբազած է յատուկ մասնաժողով մը կամ ուրիշ գիւան մը, ուղղակի հոն կը յղէ: Չայս յղումը Յարաբերութեանց գիւանն ալ կրնայ ընել:

Ո՛ր եւ է երեսօխան կրնայ լիովին ծանօթութիւն առնուլ աղերսագիրներէն, անոնց քննութեանն զբազօղ գիւանին դիմելով:

307. 91.— Ամեն մէկ աղերսագիր՝ տեղեկագրի մը եւ որոշման մը նիւթ է քննիչ գիւանին մէջ:

Տրված որոշումն՝ իրրեւ պատասխան իմաց կը սրվի աղերսագրողին, աղերսագրին կարգին թըւահամարովը, որոյ առջեւ նշանակեալ է այդ որոշումը:

Քննիչ գիւանը կամ մասնաժողովը ժողովին առեանը կը բերէ այն աղերսագիրները՝ զորս Արչութեան յղել կ'ենզրակայէ, եւ զանոնք որ օգտակար կը գտաէ ժողովին քննութեանն են թարկել:

Առաջնութիւն կամ ստիպողութիւն կրնայ խնդրովի աղերսագրի մը քննութեան համար. ժողովը կ'որոշէ սոյն պարագային մէջ՝ ձեռամբարձով առանց վէճի:

Երեք ամսի մէջ գոնէ՝ Արչութիւնը կը ծանուցնէ աղգային օրագրի միջոցով ինչ ելք որ տուաւ ժողովէն իրեն յղեալ աղերսագրոց:

Թ. ԳԼՈՒԽ

Ներքին եւ արտաքին բարեկարգութիւն Աղգային ժողովին:

307. 92.— Ժողովին բարեկարգութիւնը՝ յանուն ժողովին Նախագահ Սրբազանը կը հոգայ, անձամբ կամ իւր փոխանորդին ձեռքը. փոխանորդ չօր կը վերաբերի նաեւ ժողովարանին նիւթական պիտոյից հոգը:

307. 93.— Ո՛չ ոք օտար՝ ո՛չ մէկ պատճառանօք՝ չը կրնար մտնել երեսօխանաց բազմած շրջապատին մէջ:

307. 94.— Ժողովուրդին ունկնդրութեան իրաւունքը լիովին վճարված է ատենագրութեանց հրատարակմամբը, որ՝ իրրեւ արձագանք ժողովին՝ համօրէն ազգին ըսողութեանը կը համարի: Ներկայութեամբ սահմանեալ ունկնդրութեան թոյլատուութիւնը չնորհ մըն է ժողովին կողմէն՝ զոր Նախագահը կամ Ատենապետը կը անօրինեն:

Վերնատունը՝ տիկնայց յատկացեալ է: Դասը՝ եկեղեցական ունկնդրաց, դաւառական եւ թաղական ժողովականաց ու խորհրդականաց, նախկին երեսօխանաց, աղգային ըրագրապետաց եւ պատուաւոր օտարագրեաց յատկացեալ է, զորոնք՝ բարապանք կ'ընդունին ու կը տեղաւորեն:

Նիստին բոլոր տեւողութեան ասեն՝ ունկնդիրք լուռ կենալու են եւ նստած:

Հաւանութեան կամ տեղօնութեան ձայն բարձրացնողը իսկոյն դուրս կը հանվի ունկնդրութեան տեղէն՝ բարեկարգութեան պահպան բարապանաց ձեռքը, հրամանաւ Նախագահին կամ Ատենապետին:

307. 95.— Եթէ ժողովը աղմուկայոյց ըլլայ, եւ Ատենապետը կամ Նախագահը չը կարենան հանդարտութիւնը վերահաստատել, կազդարարեն թէ նիստը դադարեցնելու պիտի պորտաւորին:

Երկրորդ ապարդիւն ազգէն ետքը՝ նիստը կը վերնայ կէս ժամի չափ. — Կէս ժամէն՝ նիստ ու վիճարանութիւն դարձեալ կը շարունակվին:

Եթէ աղմուկը նորէն սկըսի, Ատենապետը՝ ժողովին իմաց տալէն ետքը՝ կրնայ վիճարանութիւնը վաղեալ յայտարարել, եւ անմիջապէս քըւէարկութեան ձեռնարկել, եթէ տեղի կայ:

Եթէ աղմուկը մէյ մ'ալ սկըսի ու քըւէարկութիւնը խախտէ, կամ ժողովին մէջ բըւնութեան դիմօղներ ըլլան, իսկոյն կը վերնայ նիստը:

307. 96.— Պատրիարք Սրբազանին հոգն է հսկել Աղգային ժողովին ներքին եւ արտաքին ապահովութեան:

Առ այս պէտք եղած միջոցները ձեռք կ'առնու, հարկաւոր դատած հրամանները կու տայ, եւ ըստ հարկին՝ պահապան զօրութիւն կըխընդ-

րէ ստիկանութենէն, իր հրամանին տակ գործելու:

Պատրիարքական իշխանութեան սահմանը՝ թէ՛ Ազգին եւ թէ՛ Տէրութեան առջեւ՝ իր ուխտին ու պատասխանատուութեան սահմանն է:

Թ. ԳԼՈՒԽ

Պատժական կանոնք

307. 97.— Աղգային ժողովին կանոնադանց անդամոց անօրինակութեամբ բարեկարգական պատիժները՝ չորս աստիճան՝ սայոնք են:

- 1<sup>0</sup> Ի կարգ կոչում.
- 2<sup>0</sup> Ատենագրութեամբ ի կարգ կոչում.
- 3<sup>0</sup> Յանդիմանութիւն.
- 4<sup>0</sup> Պարտաւանօք յանդիմանութիւն.

Եեզմ պատիժները Ատենապետը կը անօրինէ. խիստ պատիժները ժողովը կ'արտասանէ:

307. 98.— Ի կարգ կը կոչվի ա՛յն ատենաբանն որ կարգէն խտտորի, ա՛յն անդամն որ 28 յօդուածին պատուիրանքը չը յարկելով կամ ո՛ր եւ է կերպով բարեկարգութիւնը խանգարէ:

307. 99.— Ատենագրութեամբ ի կարգ կը կոչվի ա՛յն անդամն որ մի եւ նոյն նիստի մէջ երկու անգամ, կամ երկու յաջորդ նիստերու մէջ ի կարգ կոչվեցաւ:

307. 100.— Ատենապետն ինքնին անկախ հեղինակութիւն ունի ի կարգ կոչելու:

Խօսքը կը չնորհվի ա՛յն ատենաբանին որ ի կարգ կոչեալ՝ կը հպատակի Ատենապետին հեղինակութեանն ու կը խնդրէ՝ զինքն արդարացնել:

Անի որ՝ խօսելու արտօնութիւնը չ'առած՝ զինքն ի կարգ կոչել տուաւ, խօսք չ'ունի՝ զինքն արդարացնելու համար այլ միայն առեանին վերջերը, եթէ Ատենապետը չը հաճի:

Եթէ Ատենապետը ետ չ'առաւ ի կարգ կոչումը, ատենագրիւրք՝ զանի կը նշանակեն ատենագրութեան մէջ:

307. 101.— Երբոր ատենաբան մը մի եւ նոյն նիստի մէջ երկու անգամ ի կարգ կոչվի, ժողովը կրնայ՝ Ատենապետին առաջարկութեան վրայ արգիլել զանի խօսքէ՝ այնուհետեւ այն նիստին մէջ:

Ժողովը կ'որոշէ ձեռամբարձով առանց վէճի: 307. 102.— Յանդիմանութիւն կ'արտասանվի այն անդամին դէմ:

1. Որ ատենագրութեամբ ի կարգ կոչու մէն ետքը՝ չը դառնար ի կարգ եւ ի պարտականութիւն .

2. Որ մի եւ նոյն նիստի մէջ երեք անգամ կամ յաջորդապէս երեք նիստի մէջ ի կարգ կոչման պատժին արժանանայ .

3. Որ ժողովին մէջ աղմուկայոց տեսարան մը յարուցանելու նախաձեռնէ , կամ օրէնսդրական աշխատանքէ հաւաքապէս ձեռնպահութիւն թելադրէ .

4. Որ իր պաշտօնակցաց մէկուն կամ մէկ մասին դէմ նախատինք կամ գրգռիչ սպառնալիք ուղղէ :

307. 103.— Պարսաւանօք յանդիմանութիւն կ'արտասանվի այն անդամին դէմ .

1. Որ պարզ յանդիմանութեան դիմադարձութիւն ընէ .

2. Որ բռնութեանց դիմէ կամ ունկնդրաց յարձակման ձայնատու ըլլայ .

3. Որ հայտնէ կամ ընկերին ձեռք վերցնէ .

4. Որ ըզժողովն անարգէ , կամ անոր մէկ մասը , կամ Ատենակետը :

307. 104.— Պարսաւանօք յանդիմանութիւնը հարկ կը դնէ յանցաւոր երեսփոխանին՝ իսկ նոյն ատենանը թողուլ դուրս ելնել եւ զգուշանալ երեւիլէ մէյ մ'ալ նոյն նիստին մէջ :

Եթէ չ'ելնէ , Նախագահը հրաման կ'ընէ . եթէ այս հրամանին անհնազանդութիւն ըլլայ , նիստը կը վերնայ , եւ յանցաւորին մէկնիլէն ետքը կրնայ դարձեալ շարունակվիլ . բայց անհրնազանդ յանցաւորը յաջորդ նիստին մէջ խօսելու իրաւունքը կը կորուսնէ :

307. 105.— Յանդիմանութիւնները՝ թէ՛ պարզ եւ թէ՛ պարսաւանօք՝ ժողովը կ'արտասանէ ձեռամբարձով առանց վէճի , Ատենակետին՝ յանուն Անտնագրութեան՝ առաջարկութեանը վրայ , եւ Նախագահը կը գործադրէ :

Երեսփոխանը՝ որու դէմ առաջարկվի այս բարեկարգական պատիժներէն մէկը կամ միւսը , միշտ իրաւունք ունի իր արդարացման համար խօսելու . կամ յանուն իւր խօսեցնելու իր պաշտօնակցաց մէկը :

Ժողովին արտասանած պատիժները ատենագրութեանց մէջ կ'արձանագրվին , իսկ այս վրձիւներուն դէմ հետեւ յանդիմանողին անունը՝ եթէ ըլլայ այդ աստիճան կանոնադրանց՝ հասարակաց թերթերով ալ կը տարածայնի , ի հրապարակ տալով ատենագրութեան ա՛յն քաղուածը ուր պատիժը յիշեալ է :

307. 106.— Կ'ընկնի երեսփոխանութենէ ա՛յն անդամն որ ժողովարանին մէջը կամ շուրջը ոճիր մը գործէ , կամ իր օրէնսդրական պաշտօնին տեւման ատեն պատժական ատենանի մը կողմէն դատաստանութիւն մը կրէ , որ զրկէ զինքը՝ իրրեւ բարոյապէս անբաւական՝ ընտրելութեան իրաւունքէն , ըստ Սահմանադրութեան :

Պաշտօնանկութիւնը ժողովէն կ'արտասանվի՝ յետ օրինաւոր ապացուցման :

Ժ.Ա. Գ.Լ.ՈՒՆ

Բացակայութիւն

307. 107.— Բացակայութեան հզօր եւ բանաւոր պատճառներ են՝

- 1. ձամբորդութիւն .
- 2. Հիւանդութիւն .
- 3. Հրդեհ թաղին մէջ .
- 4. Մանր հիւանդ տան մէջ .

307. 108.— Նախագահ Սրբազանին ներկայութիւնը միշտ կարեւոր է ժողովին շուրջն ու պատկառանքն աւելցնելու համար , եւ երբեմն անհրաժեշտ՝ ժողովին ներքին եւ արտաքին ապահովութեանը համար :

Երբոր բանաւոր պատճառով կամ ազգային կարեւոր ու ստիպող գործով մը զբաղեալ ըստիպվի բացակայութեան , իր տեղ առօրեայ Նախագահ մը կը ցուցնէ :

307. 109.— Մայր դիւանին անդամոց ներկայութիւնը միշտ հարկաւոր է ատենանին բացման ճիշտ օրոշեալ ժամուն , մասնաւոր Ատենակետինն ու խմբագիր ատենագրորինը անհրաժեշտ է , մէկը ատենանը բանալու համար , միւսը ատենագրութեան վրայ գիտօղութեանց պատասխանելու համար :

Երբոր Ատենակետը հզօր պատճառով մը ըստիպվի բացակայութեան , պարտաւոր է բաւական ժամանակ առաջ իմաց տալ երկու դերատենակետաց միանգամայն , զի եթէ մէկն ալ նմանապէս անյաղթելի ուժի մը տակ զբտնրվի՝ կարենայ միւսին իմաց տալու միջոց ունենալ :

Նմանօրինակ կը պարտին իրարու իմաց տալ եւ ատենագրորք :

Ժողովին պատուարժանութեանը դպչելի անտեղութիւն է՝ դիւանին անդամոց բացակայու-

թեան երեսէն՝ առօրեայ դիւանով ատենան բանալու հարկին տակ գտնվիլ (յօդ. 2) :

307. 110.— Հրաժարեալ կը համարվի այն երեսփոխանը .

1. Որ առանց բանաւոր պատճառի երկու յաջորդ նիստերու բացակայ մնալով , երրորդին անձամբ չը պատասխանէ նախագահական յատուկ կոչմանը . ասի՝ իր յանձնառած պաշտօնին անհոգութիւն ըրաւ երեք անգամ .

2. Որ՝ առանց բանաւոր պատճառ յայտնած ըլլալու՝ ատենական շրջանի մը երեք անբաւական նիստերու մէջ անուանական կոչման չը պատասխանէ . ասի՝ Ազգին գործը ետ մնալու պատճառ եղաւ երեք անգամ :

Այս դասի անդամները՝ եռապատիկ պարտազանց՝ 102 յօդուածին խտտութեանը կը հանդիպին , որ բացակայութեան վերադիրով այսքան կը ծանրանայ եւ կ'ըլլայ վերջնական բացակայութիւն , 'զոր ժողովը կը վճռէ ձեռամբարձով առանց վէճի՝ Ատենակետին յանուն կանոնագրութեան առաջարկութեանը վրայ (1) :

Պարտազանցութեամբ հրաժարեալ համարելոց անունները՝ ատենագրութեանց մէջ նշանակվելէն զատ՝ հասարակաց թերթերն ալ կը տանին ընտրողաց ականջը :

307. 111.— Թէ՛ կանոնին հրաժարցուցած թէ՛ ինքնին հրաժարողաց եւ թէ՛ վախճանեալ երեսփոխանաց տեղ նոր ընտրութիւնները ատենական տարւոյն վերջը կ'ըլլան ընդհանուր ընտրութեանց ատեն :

Սակայն եթէ ժողովէն պակսող անդամոց

(1) Հրահանգ.— Գիւանը պատժատեար մ'ունի տամբաձեւ , որոյ մէջ անձիւր պատիժ իր երկու էջն ունի դէմէ դէմ . հոն կը նշանակեն ատենագրորք անձիւր նիստին մէջ տեղի ունեցած պատիժը , նոյնպէս և բացակայութիւնքը , Ամեն նիստին վերջերը , նոյն տետրը աչքէ անցնելով՝ եթէ կայ պարտազանցութեան աստիճանը հասած անուն՝ ջանկը կուտան Ատենակետին , որ 'զանի կը կարգայ և ժողովը կ'արտասանէ անոնց հրաժարեալ համարումը .

Թիւր օրինական թիւին քառորդն անցնելով՝ իսկական թիւին ամբողջութիւնը խորել սպառնայ (յօդ. 49) , ժողովը կրնայ՝ երբ որ ըլլայ պատահական ընտրութիւն հրամայել , Նախագահ Սրբազանին կամ Գիւանին առաջարկութեանը վրայ :

Եթէ գիւանին մէջ պատահի հրաժարումը , անմիջապէս յաջորդ նիստին կ'ըլլայ ընտրութիւնը (տե՛ս յօդ. 5) :

ՎԵՐՋԻՆ 307.— Եթէ ատենական շրջանի մը մէջ երկու անգամ միայն՝ յաջորդապէս թէ՛ ընդմիջապէս՝ նիստը բողոքովին անբաւական մնալով տեղի չ'ունենայ կամ վերնայ , սոսկ որոշող մասին բացակայութեան երեսէն , եւ երրորդին՝ եթէ երեսփոխանը նախագահական յատուկ կոչնագրին խուլ մնան ու նիստը դարձեալ անբաւական թողուն (յօդ. 52) , բացակայ մեծամասնութիւնը՝ իրրեւ եռապատիկ պարտազանց՝ ըստ կանոնի հրաժարեալ կը համարվի (յօդ. 110) :

Եթէ այդ անակնկալ այլ ոչ անկարելի դէպք տեղի ունենայ , Նախագահ Սրբազանը անհրաժեշտ հարկին մէջ կը գտնվի ստիպողական ատենան բանալու ո՛ր եւ է թըւով ներկայ անդամոց , որը կը հաստատեն մեծամասնութեան բացակայութիւնը , կ'արտասանեն 110 յօդուածին անօրինած արժանահաս վճիռը , եւ զ'ատենագրութիւնը կ'ըստորագրեն :

Հետեւեալ օրը՝ ստիպողական ատենանին վրձիւն հրատարակելով , միանգամայն եւ բացակայից տեղ նոր ընտրութեանց հրահանգները տալով ընտրող ժողովոց , Պատրիարք Սրբազանը՝ իրրեւ աւանդապահ ազգային գործադիր իշխանութեան՝ անմիջապէս կը հողայ զ'Ազգային ժողովին ամբողջացումը :

ԻՄԲՐՈՒՐ  
ՌՈՒՍԻՆԵԱՆ  
ԸՆԱԿԵԱԼ ՄՈԱԶԱՅ ԼԱԲԱՆՈՒԹԵԱՄԲ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ  
Ի ՆՈՏ Ե. 4 ՆՈՅ. 1874

ԱՏԵՆԱԳՊԻՐ՝ ԱՏԵՆՊԵՏ  
Ս. Գ. Գ. ՓԱՓԱԶԵԱՆՅ  
ՌՈՒՍԻՆԵԱՆ



Մամլածիս

85.	Յակոբ	Պաշեան	Հր.
86.	Աւետիս	Քոչեան	
87.	Սարգիս	Զրանեան	Հր.
88.	Նազարէթ	Շահազ	Բ. 2
89.	Մկրտիչ	Քիւրքճիբանլեան	Հր.
90.	Նշան	Օսեան	
91.	Յակոբ	Աբշահ	Բ. 2
92.	Յակոբ	Քաղաղեան	Բ. 2
93.	Նազար	Մելիքեան	Բ. 9
94.			

Խաւարիկ

95.	Ա. աքել	Ալթուն Տիւրքի	Բ. 2
96.	Խաչատուր	Պ. Միսաքեան	Բ.
97.	Սարգիս	Աբաղեան	
98.	Սիմոն	Միքայէլեան	
99.	Ռէթէոս	Պէլիկեան	Բ.
100.			

ԳԱՒԱՌԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ

Կարին

101.	Գէորգ	Մկրտիչեան	Հր.
------	-------	-----------	-----

Փրկմանիկ

102.	Մեղրոյ	Յ. Ա. Վաթեան	
------	--------	--------------	--

Աղբիւրանոցիկ

105.	Ռուբէն	Կիւմիւշկէրտանեան	
------	--------	------------------	--

Նիկոմիդիկ

104.	Տիգրան	Կիւմիւշկէրտանեան	Բ.
------	--------	------------------	----

Այն

105.	Պետրոս	Միսաքեան	Բ.
------	--------	----------	----

Ղարանիսար

106.			
------	--	--	--

Արարիկ

107.	Կարապետ	Խաչիկեան	
------	---------	----------	--

Քաղիչ

108.			
------	--	--	--

Պրոսա

109.	Քրիստոստուր	Ղաղարսեան	
------	-------------	-----------	--

Եղբայիկ

110.			
------	--	--	--

Ամսիկ

111.	Համբարձում	Ալանճանեան	
------	------------	------------	--

Քաղիչ

112.	Յոզմանեան	Ազնուուրեան	Բ.
------	-----------	-------------	----

Եղբայիկ

113.			
------	--	--	--

Մանկըլիք

114.			
------	--	--	--

Հանք

115.			
------	--	--	--

Երզնիկ և Քաղիչ

116.			
------	--	--	--

Քրիստոս

117.	Տիգրան	Գ. Սիմանեան	
------	--------	-------------	--

Կիսարիկ

118.			
------	--	--	--

Խարբերիչ

119.	Յոզման	Եղեան	Բ. 2
------	--------	-------	------

Պալլիքիկ

120.	Յոզմանեան	Յոզմանեան	
------	-----------	-----------	--

Մոռ

121.	Սեփան	Պ. Պ. Փափազեանց	
------	-------	-----------------	--

Չիլմոն և Մարաչ

122.			
------	--	--	--

Տիպիկ

125.	Պողոս	Մովսէսեան	
------	-------	-----------	--

Տրայիկ

124.	Մկրտիչ	Կիւմիւշեան	Բ.
------	--------	------------	----

Պաղտատ

125.			
------	--	--	--

Տիգրանիկ

126.	Թադէոս	Թեքեան	Բ.
------	--------	--------	----

Վան

127.	Սիմոն	Մաքսուտեան	
------	-------	------------	--

Աղմամար

128.	Ա. աքել Սիսակ	Տատեան	Բ. 9
------	---------------	--------	------

Հալիկ և Այնթապ

129.			
------	--	--	--

Մեքատիկ

130.			
------	--	--	--

Ռուսնիկ

131.			
------	--	--	--

Կարս

132.	Աբրահամ	Յ. Ա. Վաթեան	Բ.
------	---------	--------------	----

Չմկանագ

133.	Համբարձում	Սարգէշիչեան	Բ. 2
------	------------	-------------	------

Գաղաթիկ

134.			
------	--	--	--

Ատան

135.	Սիմոն	Պ. Նորատուկեան	
------	-------	----------------	--

Մրդերիկ

136.	Մարթէոս	Ալիքսանեան	Բ.
------	---------	------------	----

(4 վեճակ ասկումն չեն ընտրած)



ԳԻՆ 2 ՂՐՈՒՇ

ՄԵՓՈԿԱՆՈՒԹԻՒՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՍԼՏՈՒԿԻՆ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ ՄԱԽՈՒՑ ՅԱՏԿԱՑԵԱԼ

Կը ճախոշի ի Դիշանստանի Պատրիարքարանի , և կը գտնուշի  
Եկեղեցեաց բանկալները :